UNHCR
The UN Refugee Agency

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅՑՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

ՓԵՏՐՎԱՐ **2025**թ.



# 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Սույն գործիքակազմի նպատակն է իրազեկել իրավաբաններին այն մասին, թե ինչպես կարելի է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցների կիրառման միջնորդություն ներկայացնել: Այսպիսի միջոցների հայցումը ո՛չ ՄԱԿ ՓԳՀ-ի, ո՛չ նրա աշխատակազմի պարտականությունը չէ:

Սույն գործիքակազմը պատրաստվել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից՝ փորձագետների աջակցությամբ, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Քարտուղարության անդամները համագործակցության ոգով ստուգել են այն: Այս փաստաթուղթը որևէ կերպ պարտադիր բնույթ չունի Դատարանի համար:

Թարմացվել և հրատարակվել է ՄԱԿ ՓԳՀ-ի՝ Ստրասբուրգում եվրոպական հաստատություններում ներկայացուցչության կողմից 2025թ. փետրվարին:

**Կազմի լուսանկարը՝**

Հունաստան. Աֆղանստանից երկու մանկահասակ փախստական իրար ձեռք բռնած՝ Մորիայի ընդունման կետի և Լեսբոսի նույնականացման կետի մոտակայքում գտնվող ոչ պաշտոնական ճամբարում:

© ՄԱԿ ՓԳՀ/Աքիլեաս Զավալիս

**Կոնտակտային տվյալներ**

UNHCR Representation to the European Institutions in Strasbourg
c/o Council of Europe
Agora Building
F-67075 Strasbourg Cedex
France
www.unhcr.org

# Բովանդակություն

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4**

**2. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ 5**

**3. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ԱՌԱՐԿԱՆ 6**

**4. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 7**

4.1. Միջանկյալ միջոցներ միջազգային պաշտպանություն հայցող դիմողների համար 7

4.2. Միջանկյալ միջոցները միջպետական գործերում 8

**5. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴԻՄՈՂՆԵՐԸ 8**

5.1. Երեխաները կարո՞ղ են դիմել: 8

5.2. Ընտանեկան դիմումներ 9

5.3. Խմբային միջնորդություններ 9

5.4. Ներկայացուցչություն 9

5.5. Լիազորագիր 9

5.6. Դիմողների հետ շփման դժվարությունները 9

**6. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10**

6.1. The ECHR Rule 39 site (ՄԻԵԴ 39-րդ կանոնի կայք) 10

6.2. Խմբային միջնորդություններ 10

6.3. Ֆաքսով կամ փոստով ուղարկված միջնորդությունները 11

6.4. Լեզուն 11

6.5. Տեխնիկական չափանիշները 11

6.6. Կոնտակտային տվյալները 11

**7. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ 11**

7.1. Ո՞վ է կրում ապացուցման բեռը: 12

7.2. Ի՞նչն ապացուցել 12

7.3. Ի՞նչ չափով ապացուցել 12

7.4. Ինչպե՞ս պետք է ապացուցվի անդառնալի վնասի անմիջական վտանգը 13

7.5. Վստահարժանությունը 14

7.6. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն: 14

**8. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ 15**

8.1. Անմիջական վտանգ 15

8.2. Կասեցնող ազդեցությամբ ներպետական իրավական պաշտպանության միջոցներ 15

8.3. Ներկայացման ժամկետները 15

8.4. Դատարանի աշխատանքային ժամերը 15

8.5. Արտաքսման օրն ու ժամը 15

**9. ԸՆԹԱՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ 16**

9.1. 39–րդ կանոնի ընթացակարգում որոշումների կայացման մարմինները (վերցված է Դատարանի «Գործնական ուղեցույցից») 16

9.2. Շրջանակից դուրս միջնորդություններ 16

9.3. Չհիմնավորված կամ թերի միջնորդություններ 16

9.4. Միջանկյալ միջոցների կիրառման միջնորդությունների մասին դատարանի որոշումներ 17

9.5. Որոշումների հաղորդակցումը 18

9.6. Հետագա գործողություններ 18

9.7. Հետագա ընթացակարգային որոշումներ 18

**10. Ի՞ՆՉ Է ԼԻՆՈՒՄ ՀԵՏՈ 21**

10.1. Չեն կիրառվել միջանկյալ միջոցներ 21

10.2. Կիրառվել են միջանկյալ միջոցներ 21

10.3. Համապատասխանության հետ կապված խնդիրներ 21

10.4. Միջանկյալ միջոցը վերացնելը 22

10.5. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը և Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնը 22

**11. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ 23**

**12. ՄԻԵԴ-ի 39-րդ կանոնին վերաբերող առանցքային փաստաթղթերը 24**

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը գտնվում է Ստրասբուրգում (այսուհետ՝ «Դատարան») Եվրոպայի խորհրդի կողմից 1959թ. ստեղծված միջազգային դատարան է: Այն վճիռներ է կայացնում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ «ՄԻԵԿ») ամրագրված քաղաքացիական և քաղաքական իրավունքների ենթադրյալ խախտումների մասին անհատական և Պետությունների կողմից ներկայացված դիմումների քննությամբ: Այն չպետք է շփոթել ոչ Եվրոպական միության արդարադատության դատարանի հետ, որի նստավայրը Լյուքսեմբուրգն է, ոչ էլ Հաագայում գտնվող Արդարադատության միջազգային դատարանի հետ:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան միջազգային պայմանագիր է, որի ներքո Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խոստանում են ապահովել հիմնարար քաղաքացիական և քաղաքական իրավունքները ոչ միայն իրենց քաղաքացիների, այլև իրենց իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց համար (ՄԻԵԿ 1-ին հոդված):

Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնի համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է վարույթի կողմերի նկատմամբ միջանկյալ միջոցներ կիրառել: Սրանք հրատապ միջոցներ են, որոնք կիրառվում են բացառիկ դեպքերում, երբ դիմողները, դրանց չկիրառման դեպքում, կառերեսվեն անդառնալի վնասի անմիջական վտանգի:

Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց համար 39-րդ կանոնի համաձայն կիրառվող միջանկյալ միջոցները կարող են ապահովել անմիջական անդառնալի վնասի կանխումը:

Օրինակ՝ Դատարանը միջակյալ միջոցներ է կիրառել՝ կասեցնելու կամ կանխելու այդ անձանց արտաքսումը կամ ապահովելու ընդունման արժանապատիվ պայմաններ (տե՛ս 4-րդ պարբերության 1-ին մասը ստորև) :

Նրանց արագ արձագանքման շնորհիվ միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք հաճախ ապավինում են միջանկյալ միջոցների՝ ապահովելու իրենց հիմնարար իրավունքների պաշտպանությունը:

Դրանք վճռվում են առանց գործի վարույթ ընդունման կամ գործի էության մասին հետագա որոշումների մասին նախնական վճռի: Դրանք պարտադիր իրավական ուժ ունեն հասցեատեր կողմի համար: Դատարանը մեծ թվով միջանկյալ միջոցների կիրառման թերի և/կամ չհիմնավորված միջնորդություններ է ստանում: 2019 – 2023թթ. ընթացում Դատարան է ներկայացվել միջանկյալ միջոց հայցող 7676 դիմում և դրանցից միայն 2,745-ն է բավարարվել:[2] Գրեթե կեսը (3,368) համարվել է շրջանակից դուրս,[3] այսպիսով գերկարևոր է, որ միջանկյալ միջոցների միջնորդությունները լիարժեք և լավ հիմնավորված լինեն:

Միջանկյալ միջոցների ճիշտ կիրառման մասին տեղեկություններ հասանելի են Դատարանի կայքում,[4] և տեղեկություններ կան նաև Դատարանի 39-րդ կանոնի նոր կայքում (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս 6-րդ պարբերության 1-ին կետը և հաջորդիվ):[5]

Սույն «39-րդ կանոնի գործիքակազմի» նպատակն է հզորացնել ապաստան հայցող անձանց պաշտպանությունը՝ իրավաբաններին տրամադրելով մանրակրկիտ գործնական տեղեկություններ 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցների մասին և օգնել նրանց՝ պատրաստել իրենց միջնորդությունները այս Կանոնի համաձայն:

1. «Դատարանի կանոնակարգը» ՄԻԵԿ-ի 25-րդ հոդվածի «դ» կետով Դատարանի լիագումար նիստի կողմից հաստատված ընթացակարգի կանոններն են: Դատարանի կանոնակարգի այս հրատարակությունը ներառում է 39-րդ կանոնի՝ Դատարանի լիագումար նիստի կողմից 2024թ. փետրվարի 23-ին ընդունված և 2024թ. մարտի 28-ին ուժի մեջ մտած փոփոխությունները և Դատարանի կանոնակարգի 32-րդ կանոնի համաձայն Դատարանի նախագահի կողմից հաստատված «Միջանկյալ միջոցների համար միջնորդությունների գործնական ուղեցույցը»: Ամենաթարմ տարբերակը հասանելի է Դատարանի կայքում՝ Դատարանի կանոններ – 28 մարտի 2024 (coe.int), Միջանկյալ միջոցների համար միջնորդությունների գործնական ուղեցույց (coe.int); գործնական տեղեկատվական փաստաթուղթ. Ինչպես կապ հաստատել Դատարանի հետ միջանկյալ միջոցի կիրառման հասնելու նպատակով:
2. Միջանկյալ միջոցների վերաբերյալ վիճակագրությունը հասանելի է այստեղ՝ https://www.echr.coe.int/Documents/Stats_art_39_01_ENG.pdf.
3. Նույն տեղում:
4. Տե՛ս դիմողների համար նախատեսված էջը. https://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=applicants&c=#n1365511916164_pointer (անգլ./ֆր.) :
5. https://r39.echr.coe.int/.

**ԿԱՆՈՆ 39 (Քաղվածք Դատարանի կանոնակարգից 28.03.2024թ.)**

1. Դատարանը կարող է բացառիկ հանգամանքներում, կողմի կամ որևէ այլ շահագրգիռ անձի խնդրանքով, կամ սեփական նախաձեռնությամբ, կողմերի նկատմամբ կիրառել իր կարծիքով ընդունելի համարվող միջանկյալ միջոցը: Նման միջոցները, որոնք կիրառելի են Կոնվենցիայով սահմանված իրավունքին այնպիսի անդառնալի վնաս պատճառելու անմիջական վտանգի դեպքում, որը, իր բնույթով, ենթակա չէ փոխհատուցման, վերականգնման կամ համարժեք նյութական կամ ֆինանսական հատուցման, կարող են ընդունվել անհրաժեշտության դեպքում՝ ելնելով կողմերի շահերից կամ վարույթի պատշաճ ընթացքից:
2. Դատարանի՝ միջանկյալ միջոցների համար միջնորդությունների մասին որոշումների կայացման լիազորությունն իրացվում է հերթապահ դատավորների կողմից, որոնք նշանակվում են ըստ սույն Կանոնի 5-րդ մասի կամ, ըստ անհրաժեշտության, Սեկցիայի նախագահի, Պալատի, Մեծ պալատի նախագահի, Մեծ պալատի կամ Դատարանի նախագահի կողմից:
3. Բոլոր ողջամիտ համարվող դեպքերում կոնկրետ գործով ընդունված միջոցի մասին անմիջապես ծանուցում կարող է տրվել Նախարարների կոմիտեին:
4. Հերթապահ դատավոր է նշանակվում այս Կանոնի 5-րդ մասի համաձայն կամ, ըստ անհրաժեշտության, Սեկցիայի նախագահը, Պալատը, Մեծ պալատի նախագահը, Մեծ պալատը կամ Դատարանի նախագահը կարող են տեղեկություններ պահանջել կողմերից նշված միջանկյալ միջոցի կիրառման հետ կապված ցանկացած հարցով:
5. Դատարանի նախագահը նշանակում է Սեկցիաների փոխնախագահներին որպես հերթապահ դատավորների՝ միջանկյալ միջոցների համար միջնորդությունների կապակցությամբ որոշում կայացնելու համար:

## 2. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

### Ո՞րն է միջանկյալ միջոցների նպատակը:

Դատարանի նախադեպային որոշումների համաձայն միջանկյալ միջոցները «կենսական դեր են խաղում՝ խուսափելու այնպիսի անդառնալի իրավիճակներից, որոնք կարող են թույլ չտալ Դատարանին պատշաճ քննել դիմումը և, ըստ անհրաժեշտության, ուղղված են ապահովելու դիմողի՝ Կոնվենցիայով ամրագրված իրավունքների գործնական և արդյունավետ իրացումը»:[6] Այլ կերպ ասած՝ միջանկյալ միջոցներն առանցքային կարևորություն ունեն՝ գործի ըստ էության քննության և կիրարկման և ՄԻԵԿ-ով ամրագրված և վտանգված իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Օրինակ՝ միջազգային պաշտպանություն հայցողները գուցե ցանկանան Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատ ներկայացնել ընդունող երկրի իրշխանությունների այնպիսի որոշման դեմ, որով մերժվել է միջազգային պաշտպանության տրամադրումը և վճռվել է վերադարձնել անձանց ծագման երկիր, որտեղ նրանք վախենում են իրենց կյանքի սպառնացող հանգամանքներից: Այս դեպքում Դատարանը կարող է սահմանել միջանկյալ միջոցներ՝ կանխելու մոտալուտ արտաքսումը, այսպիսով ապահովելով դիմողների կյանքի իրավունքի անդառնալիորեն վտանգված չլինելը, քանի դեռ Դատարանը հնարավորություն չի ունեցել քննել նրանց հայցը:

Ըստ հիմնավորման՝ սկզբունքորեն միջանկյալ միջոցներին զուգահեռ կամ դրանից հետո պետք է մշտապես ներկայացվի ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն գործի էության անհատական դիմում: 39-րդ կանոնի ներքո կայացվող որոշումը կապված է Դատարանի առջև բերված վարույթի հետ: Եթե այսպիսի դիմում չի ներկայացվում, միջանկյալ միջոցը կարող է հանվել (և այսպիսով կորցնել իր ազդեցությունը), իսկ դիմումը կարող է հանվել Դատարանի գործերի ցանկից դիմումի հետագա քննություն իրականացնելու մտադրության բացակայության պատճառով (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս 10.4 կետը ստորև): Անհրաժեշտության դեպքում Դատարանը կարող է որոշել դիմումն անընդունելի համարել՝ միևնույն ժամանակ մերժելով միջանկյալ միջոցների կիրառման միջնորդությունը:

6. 39-րդ կանոնի 1-ին կետ: Տե՛ս նաև ՄԻԵԴ, Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի, Դիմում թիվ 46827/99 և 46951/99, Մեծ պալատի 2005թ. փետրվարի 4–ի վճիռ, պարբ. 125:

## 3. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ԱՌԱՐԿԱՆ

### Ո՞րն է 39-րդ կանոնի պաշտպանության առարկան:

39-րդ կանոնը, որը վերջերս ՝ 2024թ. մարտին է ներառվել կանոնակարգում, վերաբերում է այն փաստին, որ միջանկյալ միջոցները կիրառելի են այն դեպքերում, երբ կա «Կոնվենցիայով ամրագրված իրավունքի անդառնալի վնասի անմիջական վտանգ»:[7] «Կոնվենցիայով ամրագրված իրավունքի անդառնալի վնաս» հասկացությունը սահմանվել է որպես այնպիսի վնաս, որը, իր բնույթի պատճառով, ենթակա չէ փոխհատուցման, վերականգնման կամ համարժեք նյութական կամ ֆինանսական հատուցման: ՄԻԵԴ-ի գործնական ուղեցույցի համաձայն. **«**վերականգնում**»** եզրը պետք է հասկանալ որպես վերադարձ հասցված որևէ վնասին նախորդող իրավիճակին: Այսպիսով, Դատարանի կողմից միջանկյալ միջոցները կիրառվում են այն դեպքերում, երբ կա ռիսկ առ այն, որ այսպիսի միջոցների բացակայությունը կհանգեցնի այնպիսի իրավիճակի, որում ողջ ծավալով վերականգնումը (restitutio in integrum) և փոխհատուցման այլ ձևերը հնարավոր կլինեին, եթե Դատարանը դրանք հիմնավորված համարեր նախորդող վարույթի ավարտին: Գործի հանգամանքները պետք է հետևաբար գերազանցեն լրջության բարձր շեմը, որպեսզի դիտարկվեն 39-րդ կանոնի ներքո: Միջանկյալ միջոցները նախատեսվում են միայն այն դեպքում, երբ կա անդառնալի վնասի անմիջական վտանգի *առերևույթ* ապացույց, և ոչ այն դեպքերում, երբ դիմողները պարզապես ծանր վիճակում են հայտնվել միջանկյալ միջոցների բացակայության պայմաններում:[8]

Անդառնալի վնասի անմիջական վտանգն առանցքային պահանջ է, որը հարկ է պատշաճ կերպով մանրամասնել և հիմնավորել 39-րդ կանոնի համաձայն յուրաքանչյուր միջնորդությունում: Օրինակ՝ միջազգային պաշտպանություն հայցողների արտաքսման գործով անհրաժեշտ է մանրամասնել և հիմնավորել այն փաստը, որ արտաքսումը մոտալուտ է և որ դրա իրականացումը կհանգեցնի անդառնալի վնասի (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս պարբերություն 7.1-ը և հաջորդիվ):

Դատարանի նախադեպային որոշումները և պրակտիկան ցույց են տվել, որ միջանկյալ միջոցները սովորաբար կիրառվում են ՄԻԵԿ-ով ամրագրված որոշ իրավունքների պաշտպանության համար: 39-րդ կանոնը սովորաբար կիրառվում է կյանքի իրավունքին (ՄԻԵԿ-ի 2-րդ հոդված) վերաբերող և խոշտանգումների կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքի (ՄԻԵԿ-ի 3-րդ հոդված) գործերին: Ինչ վերաբերում է միջազգային պաշտպանություն հայցողներին, ապա միջանկյալ միջոցները շատ հաճախ կիրառվում են՝ կանխելու այնպիսի արտաքսումները, որոնք կյանքի սպառնալիքի կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգ են պարունակում: Այնուամենայնիվ, միջանկյալ միջոցները կարող են ընդունվել նաև՝ ապահովելու դիմողների՝ միջազգային պաշտպանության հիմնարար կարիքի բավարարումը կամ մարդկային արժանապատվությունը հարգող պայմանների ապահովումը ընդունման ժամանակ (ներգաղթի պահման ժամանակ ներառյալ):[9]

Միայն բացառիկ դեպքերում կարող են միջանկյալ միջոցներ կիրառվել՝ արձագանքելով արդար դատավարության իրավունքին (Կոնվենցիայի 6-րդ հոդված),[10] անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին (Կոնվենցիայի 8-րդ հոդված),[11] արտահայտվելու ազատությանը (Կոնվենցիայի 10-րդ հոդված)[12] վերաբերող մի շարք միջնորդությունների:

Ըստ Դատարանի նախադեպային որոշումների՝ 39-րդ կանոնը, դրա ներկայիս ձևակերպմամբ, չի կիրառվում՝ սեփականության իրավունքների պաշտպանելու, բանտում վարույթի արդարության վերաբերյալ Դատարանի որոշմանը սպասող դիմողի ազատ արձակմանը հասնելու, *հանրաքվեի* անցկացումը ապահովելու, կուսակցության լուծարումը կանխելու կամ դատական իշխանության անդամների պաշտոնավարման ժամկետի վրա ազդող սահմանադրական փոփոխությունների ընդունումը սառեցնելու համար:[13]

> **Միջանկյալ միջոցները կիրառելի են միայն սահմանափակ իրավիճակներում.** Ամենատիպիկ գործերը նրանք են, որոնցում կան վախեր՝ կապված.
>
> - Կյանքի սպառնալիքի հետ (Կոնվենցիայի 2-րդ հոդվածով որակվող իրադրությունում) կամ
> - Վատ վերաբերմունքի հետ, որն արգելվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո (խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք):

7. Նույն տեղում, պարբ. 104:
8. ՄԻԵԴ-ի միջանկյալ միջոցներ հայցող միջնորդությունների մասին գործնական ուղեցույց, պարբ. 6:
9. Ընդունման պայմանների մասին տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ, Քամարան ընդդեմ Բելգիայի, Դիմում թիվ 49255/22, Մամլո հաղորդագրություն 31. 10. 2022թ. : Կալանավորման մասին, տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ, Ն.Բ. և այլք ընդդեմ Ֆրանսիայի, Դիմում թիվ 49775/20, 31 մարտի 2022թ., պարբ. 15: Նախադեպային իրավունքին լրացուցիչ հղումները տե՛ս ստորև՝ պարբ. 4. 1:
10. ՄԻԵԴ, Վրոբելն ընդդեմ Լեհաստանի, Դիմում թիվ 6904/22, Մամլո հաղորդագրություն 8 փետրվարի 2022թ., ՄԻԵԴ, Օջալանն ընդդեմ Թուրքիայի, Դիմում թիվ 46221/99, Մեծ պալատի 2005թ. մայիսի 12–ի վճիռը:
11. ՄԻԵԴ, Էշքինազին և Շելուշն ընդդեմ Թուրքիայի (որոշում), Դիմում թիվ 14600/05, 6 դեկտեմբերի 2005թ. :
12. ՄԻԵԴ, Ինքնավար ոչ առևտրային կազմակերպություն «Նովայա Գազետան» և այլք ընդդեմ Ռուսաստանի, Դիմում թիվ 11884/22, Մամլո հաղորդագրություն 10 մարտի 2022թ.:
13. Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ Դատարանի Փաստաթերթիկը միջանկյալ միջոցների մասին:

## 4. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

### Ինչպիսի՞ միջոցներ կարող է նշանակել Դատարանը:

39-րդ կանոնը թույլ է տալիս Դատարանի դատավորներին նշանակել «ցանկացած միջանկյալ միջոց, որը նրանց կարծիքով պետք է ընդունվի ի շահ կողմերի կամ վարույթի պատշաճ ընթացքի»: Դատարանի կողմից կիրառված միջանկյալ միջոցները կարող են պահանջել, որ կողմերը ձեռնպահ մնան որոշակի գործողություններ ձեռնարկելուց կամ կարող են ուղղորդել նրանց որոշակի միջոցներ ձեռնարկել:[14] Թեև միջանկյալ միջոցների մասին որոշումների որևէ հանրայնորեն հասանելի տվյալների շտեմարան չկա, դրանց հնարավոր բովանդակության մասին տեղեկությունները կարող են ածանցվել Դատարանի նախադեպային որոշումներից և Քարտուղարության կողմից հրապարակված մամլո հաղորդագրություններից, ինչպես նաև իրավաբանների կամ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված գործնական փորձից:[15]

### 4.1. Միջանկյալ միջոցներ միջազգային պաշտպանություն հայցող դիմողների համար

Անհատական դիմումների համատեքստում (ՄԻԵԿ-ի 34-րդ հոդված) միջանկյալ միջոցները հիմնականում հասցեագրվում են պատասխանող Պետությանը, թեև Դատավորը նույնպես կարող է միջանկյալ միջոցներ կիրառել դիմողների նկատմամբ:[16] Այն գործերում, որոնք վերաբերում են միջազգային պաշտպանություն հայցող անձանց, Դատարանն, օրինակ, պահանջել է Պետություններից՝

- չվերադարձնել դիմողներին տվյալ երկիր, և թույլ տալ նրանց իրավաբաններին՝ անհրաժեշտ շփումներ ունենալ նրանց հետ,[17]
- Տրամադրել դիմողներին առաջին օգնության բնույթի աջակցություն (սնունդ, ջուր, հագուստ, պատշաճ բուժօգնություն) և ժամանակավոր կացարան, եթե հնարավոր է, և ապահովել պատշաճ իրավական աջակցություն նրանց շրջանում առանց ուղեկցության (օրինակ՝ առանց օրինական խնամակալի) մնացած երեխաներին,[18]
- Դիմողներին տրամադրել կացարան և նյութական աջակցություն՝ Դատարանի առջև վարույթի տևողության ողջ ընթացքում նրանց տարրական կարիքները բավարարելու համար,[19]
- Չարտաքսել դիմողներին մինչև լրացուցիչ ծանուցում՝ սպասելով Դատարանի առջև վարույթի ելքին կամ որոշակի ժամանակ,[20]
- Պետության տարածքում արդեն գտնվող Դիմողին տրամադրել թույլտվություն իջնել ցամաք, հասանելիություն ստանալ տարածքին, իրավաբանի ծառայությանը և ընձեռել ապաստանի դիմում ներկայացնելու հնարավորություն,[21]
- Վերջ դնել ապաստան հայցողների ընտանիքի, այդ թվում՝ երեխայի վարչական կալանքին,[22]
- Տեղափոխել ընթացակարգային երաշխիքներ չունեցող դիմողին, որի անչափահաս լինելը վիճարկվում է տարիքի գնահատման ընթացակարգով, այնպիսի շենքային պայմաններ ունեցող տարածք, որտեղ կարելի է երաշխավորել նրա՝ որպես առանց ուղեկցության մնացած երեխայի ընդունման պայմանները՝ անչափահասության կանխավարկածին համաձայն:[23]

14. Գործնական ուղեցույց, պարբ. 5:
15. Դատարանի նախադեպային որոշումները հասանելի են HUDOC տվյալների շտեմարանում (https://hudoc.echr.coe.int/eng), որը նաև ներառում է Քարտուղարության հրապարակած մամլո հաղորդագրությունները (https://hudoc.echr.coe.int/eng-press), որտեղ կարելի է կատարել առաջանցիկ որոնում՝ մի շարք հարաչափերի օգտագործմամբ, էկրանի ձախ կողմում «Փաստաթղթի տեսակի» (“Document type”) տակ ընտրելով «Միջանկյալ միջոցները» (“Interim Measures”) տողը: (https:// hudoc.echr.coe.int/eng-press#{%22documentcollectionid%22:[%22R39%22]}) :
16. Միջանկյալ միջոցները կարող են նաև կիրառվել անհատների նկատմամբ. տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ, Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի [ՄԽ], Դիմում թիվ 48787/99, 2004թ. հուլիսի 8-ի վճիռ, պարբ. 11, որտեղ Դատարանը որոշեց հորդորել դիմողներից մեկին դադարեցնել իր հացադուլը:
17. ՄԻԵԴ, Ռ.Ա.-ն և այլք ընդդեմ Լեհաստանի, Դիմում թիվ 42120/21, Մամլո հաղորդագրություն 28.09.2021թ.
18. ՄԻԵԴ, Ռ.Ա.-ն և այլք ընդդեմ Լեհաստանի, Դիմում թիվ 42120/21 և ՄԻԵԴ, Հ.Մ.Մ. և այլք ընդդեմ Լատվիայի Դիմում թիվ 42165/21, Մամլո հաղորդագրություն 25.08.2021թ., և «ՄԻԵԴ-ը միջանկյալ միջոց է կիրառում SeaWatch 3 նավին վերաբերող գործում», Մամլո հաղորդագրություն ՄԻԵԴ 043 (2019թ.) 29.01.2019թ.
19. ՄԻԵԴ, Քամարան ընդդեմ Բելգիայի, Դիմում թիվ 49255/22, Մամլո հաղորդագրություն 31.10.2022թ.
20. ՄԻԵԴ, Օ.Մ. և Դ.Ս. ընդդեմ Ուկրաինայի, Դիմում թիվ 18603/12, 15 սեպտեմբերի 2022թ., պարբ. 43
21. ՄԻԵԴ, Կեբեն և այլք ընդդեմ Ուկրաինայի, Դիմում թիվ 12552/12, 12 հունվարի 2017թ., պարբ. 24–25
22. ՄԻԵԴ, Ն.Բ. և այլք ընդդեմ Ֆրանսիայի, Դիմում թիվ 49775/20, 31 մարտի 2022թ., պարբ. 15
23. ՄԻԵԴ, Դարբոն և Քամարան ընդդեմ Իտալիայի, Դիմում թիվ 5797/17, 21 հուլիսի 2022թ., պարբ. 30–41

Ավելին, երկու շատ բացառիկ դեպքերում Դատարանը նաև Պետություններից պահանջել է.

- Պետության տարածքից չհեռացնել դիմողներին, մինչև ներպետական ատյաններում ընթացիկ դատական վարույթների վերջնական որոշման կայացմանը հաջորդող սահմանված ժամկետի ավարտը,[24]
- Ստանալ և գրանցել դիմողի ապաստանի հայցման դիմումը և ուղարկել այն իրավասու մարմինների քննությանը:[25]

## 4.2 Միջանկյալ միջոցները միջպետական գործերում

Միջանկյալ միջոցները կարող են նաև նախանշվել միջպետական գործերով (ՄԻԵԴ-ի 33-րդ հոդված)՝ ոչ անպայմանորեն կապ ունենալով միայն ապաստան հայցողների պաշտպանությանը վերաբերող գործերի հետ: Օրինակ, Դատարանը մի քանի միջանկյալ միջոց է կիրառել թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի նկատմամբ Լեռնային Ղարաբաղում և դրա շուրջը երկու երկրների միջև հակամարտությանը վերաբերող ընթացիկ միջպետական գործերի շրջանակում:[26] Միջանկյալ միջոցները ներառում են երկու պետություններին ուղղված միջոց. «ձեռնպահ մնալ որևէ այնպիսի միջոցառում, մասնավորապես ռազմական գործողություններ ձեռնարկելուց, որոնք կարող են հանգեցնել քաղաքացիական բնակչության՝ Կոնվենցիայով ամրագրված խախտումների, այդ թվում՝ նրանց կյանքը և առողջությանը ռիսկի ենթարկելը, և կատարել Կոնվենցիայով նախատեսված իրենց պարտավորությունները, մասնավորապես Կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) և 3-րդ հոդվածի (խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելք) առնչությամբ»,[27] և 2022թ. Ադրբեջանի կառավարության ուղղված հանձնարարական՝ «իրենց իրավազորությունում ձեռնարկելու բոլոր միջոցները՝ ծանր հիվանդություն և Հայաստանում բուժման կարիք ունեցող անձանց և առանց կացարանի կամ ապրուստի միջոցի ճանապարհին մնացած այլ անձանց համար երաշխավորելու «Լաչինի միջանցքով» ապահով անցումը»:[28]



# 5. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴԻՄՈՂՆԵՐԸ

## Ո՞վ կարող է դիմում ներկայացնել 39-րդ կանոնի համաձայն:

Միջանկյալ միջոցների միջնորդությունը կարող է ներկայացվել ցանկացած անձի կողմից, որին սպառնում է այնպիսի իրավունքի անդառնալի վնաս հասցնելու վտանգ, որը, ըստ Դատարանի պրակտիկայի, կարող է պաշտպանվել 39-րդ կանոնով: Միջանկյալ միջոցի կիրառման միջնորդություն ներկայացնել ցանկացող անձինք պետք է կա՛մ Դատարանի վարույթում գտնվող գործ ունենան, կա՛մ մտադիր լինեն հետագայում անհատական դիմում ներկայացնել ՄԻԵԿ 34-րդ հոդվածի համաձայն:

Դիմողները կարող են միջանկյալ միջոցների կիրառման միջնորդություններ ներկայացնել՝ անկախ իրենց քաղաքացիությունից կամ դրա բացակայությունից, պայմանով, որ նրանք ՄԻԵԿ-ի կողմ հանդիսացող (ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի իմաստով) պետություններից մեկի իրավազորության ներքո են:[29] Իրավաբանի կողմից ներկայացված լինելը պարտադիր չէ՝ միջանկյալ միջոցների միջնորդություն ներկայացնելու համար (տե՛ս ստորև), չնայած իրավաբանի աջակցությունը կարող է նպաստավոր լինել՝ ապահովելու բոլոր անհրաժեշտ պայմանների բավարարումը:

### 5.1. Երեխաները կարո՞ղ են դիմել

Երեխաները, այդ թվում՝ առանց ուղեկցության կամ օրենքով կամ սովորույթով ծնողներից կամ խնամակալներից առանձնացված երեխաները կարող են դիմել Դատարան: Ինչպես և ցանկացած այլ դիմողի դեպքում վարույթի այս փուլում երեխաները օրինական ներկայացուցչի կարիք չունեն: Ավելին, Դատարան դիմելու համար երեխաները չունեն իրենց խնամակալի կամ ծնողների՝ որպես միջնորդի դերակատարության անհրաժեշտությունը (բայց օրինական խնամակալը կամ ծնողը կարող են ներկայացնել դիմումը՝ ելնելով երեխայի շահերից):

---

24. ՄԻԵԴ, Ն.Ս.Կ.-ը ընդդեմ Միացյալ Թագավորության, Դիմում թիվ 28774/22, Մամլո հաղորդագրություն 14. 6. 22թ.
25. ՄԻԵԴ, Մ.Կ. և այլք ընդդեմ Լեհաստանի Դիմում թիվ 40503/17 42902/17 43643/17, 23 հուլիսի 2020թ., պարբ. 21
26. ՄԻԵԴ, Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի, Դիմում թիվ 42521/20 և Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի, Դիմում թիվ 47319/20, Մամլո հաղորդագրություններ 04. 11. 2020թ. և 16. 12. 2020թ.
27. ՄԻԵԴ, Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի Դիմում թիվ 42521/20 Մամլո հաղորդագրություն 30. 09. 2020 թ.
28. ՄԻԵԴ, Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի (թիվ 4), Դիմում թիվ 15389/22, Մամլո հաղորդագրություն 21. 12. 2022թ.
29. Միայն խիստ բացառիկ դեպքերում Դատարանը միջանկյալ միջոցներ է սահմանել ի նպաստ դիմողների միջազգային պաշտպանության, որոնք դեռևս որևէ Պետության իրավազորությունում չեն: ՄԻԵԴ-ի՝ Մ.Կ.-ն և այլք ընդդեմ Լեհաստանի Դիմում թիվ 40503/17 42902/17 43643/17, 23 հուլիսի 2020թ., գործով խիստ բացառիկ կերպով Դատարանը Լեհաստանի իշխանություններից պահանջեց, որ եթե դիմողը ներկայացել է սահմանային անցակետ, նրան պետք է թույլ տալ դիմել ապաստանի հայցով և չվերադարձնել հարևան երկիր (տե՛ս վճռի 21-րդ պարբերությունը)։ Ռ.Ա.-ն և այլք ընդդեմ Լեհաստանի, Դիմում թիվ 42120/21 և ՄԻԵԴ Հ.Մ.Մ. և այլք ընդդեմ Լատվիայի Դիմում թիվ 42165/21 գործերով, Մամլո հաղորդագրություն 25. 08. 2021թ. միջանկյալ միջոցը պահանջում էր միայն սննդի, ջրի, հագուստի, պատշաճ բուժօգնության և, հնարավորության դեպքում, ժամանակավոր կացարանի տրամադրում Պետության տարածքից դուրս գտնվող դիմողներին՝ առանց այդ անձանց հետ կապ հաստատելու պահանջի:

## 5.2 Ընտանեկան դիմումներ

Երբ ամբողջ ընտանիքը բախվում է անդառնալի վնասի անմիջական վտանգի, ընտանիքի անդամները կարող են դիմել միասին կամ անհատապես:

## 5.3 Խմբային միջնորդություններ

Միջանկյալ միջոցների միջնորդությունները կարող են ներկայացվել միևնույն փաստացի իրավիճակում հայտնված անձանց խմբի կողմից (օրինակ՝ մոտալուտ արտաքսում տարածքից, ցամաքով և ծովով անհապաղ վերադարձ կամ «հետդարձի» իրավիճակներ, ընդունման համապատասխան պայմանների բացակայություն և այլն): Բազմաթիվ դիմողների կողմից համատեղ ներկայացված միջնորդությունը պետք է տրամադրի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ յուրաքանչյուր առանձին դիմողի համար ուղեկցող համապատասխան ապացույցներով (տե՛ս 6.5 և 6.6 պարբերությունները):

## 5.4 Ներկայացուցչություն

Դատարանի առջև բոլոր վարույթներում ներկայացված լինելու անհրաժեշտությունը «փաստաբանի կողմից, որն ունի Պայմանավորվող կողմ հանդիսացող որևէ պետությունում պրակտիկա վարելու թույլտվություն, բնակվում է դրանցից մեկի տարածքում և հաստատվել է Պալատի նախագահի կողմից» ի հայտ է գալիս Պայմանագրի կողմ հանդիսացող պատասխանողին ծանուցումից հետո միայն:[30] Այս իսկ պատճառով, վարույթի այս փուլում միջանկյալ միջոցների համար միջնորդություն ներկայացնելիս դիմողների համար լիարժեք որակավորված իրավաբան ներկայացուցիչ ունենալու բացարձակ անհրաժեշտություն չկա (եթե միջանկյալ միջոցների համար միջնորդություն ներկայացնելը տեղի չի ունենում վարույթում գտնվող գործի շրջանակներում, որի մասին պատասխանող Պետությունն արդեն ծանուցվել է): Դիմողի ներկայացուցիչը կարող է լինել իրավաբան, ընտանիքի անդամ, ընկեր, հասարակական կազմակերպություն կամ այլ անձ: Միջազգային պաշտպանություն հայցող անձինք հաճախ 39-րդ կանոնի համաձայն միջնորդություններ են ներկայացնում հասարակական կազմակերպությունների կամ իրավաբանների օգնությամբ:

## 5.5 Լիազորագիր

Եթե միջանկյալ միջոցների համար միջնորդությունը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա հարկ է տրամադրել դիմողների ստորագրությամբ լիազորագրի պատճենը:[31] Դիմողների ստորագրությամբ լիազորագրի ձեռքբերման համար օբյեկտիվ խոչընդոտների առկայության դեպքում ներկայացուցիչը պետք է իրավիճակը բացատրի Դատարանին, և ամեն դեպքում մշտապես ներկայացնի դիմողների հետ գոյություն ունեցող կապի և նրանց՝ ներկայացուցիչ ունենալու ցանկության ապացույցներ:[32] Այսպիսի ապացույցների բացակայության դեպքում դիմումը կարող է մերժվել: Ներկայացուցիչը պետք է նաև ներկայացնի լիազորագիր դիմողների հետ ֆիզիկական շփման առաջին իսկ հնարավորության դեպքում:

### 5.6. Դիմողների հետ շփման դժվարություններ

Որոշ հանգամանքներում դիմողների համար իրենց ներկայացուցչի հետ հաղորդակցվել գուցե դժվար կամ անգամ անհնար լինի և հակառակը (օրինակ՝ երբ դիմողները կալանքի տակ են կամ արգելափակված են սահմանամերձ տարածքներում): Այս դեպքերում 39-րդ կանոնի համաձայն միջնորդություններում հարկ է մասնավորեցնել խոչընդոտները և խնդրել Դատարանին պատասխանող Պետությունից պահանջել դյուրացնել դիմողների և նրանց ներկայացուցչի միջև հաղորդակցությունը: Դատարանն արդեն իսկ միջամտել է՝ որոշելով, որ հարկ է ապահովել շփումները ներկայացուցիչների և անմատչելի սահմանային տարածքներում գտնվող արգելափակված և միջազգային պաշտպանություն հայցող դիմողների միջև:[33]

30. Տե՛ս Դատարանի կանոնակարգի 36-րդ կանոնը:
31. Կարելի է օգտագործել Դատարանի կողմից տրամադրված ձևաչափը (https://www.echr.coe.int/Documents/Authority_Form_ENG.pdf) : Այնուամենայնիվ, միջանկյալ միջոցների համատեքստում ընդունելի են նաև այլ ձևաչափերը:
32. Ապացույցները կարող են բաղկացած լինել բջջային հավելվածով (WhatsApp) դիմողների հետ փոխանակած հաղորդագրություններից, դրանք կարող են բավարար լինել գործել և դիմում ներկայացնել համար Դատարանի կողմից օրինական ներկայացուցչին լիազորագիր ունենալու կամ լիազորված լինելու պահանջը բավարարելու համար. ՄԻԵԴ, Զ. Ռ.-ն և այլք ընդդեմ Հունաստանի, Դիմում թիվ 22696/16, 25 հունվարի 2018թ., պարբ. 72–74: Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ մամլո հաղորդագրությունը. Բջջային հաղորդագրությունների հավելվածը նպաստում է արդարադատության մատչելիությանը. ՄԱԿ ՓԳՀ բլոգ
33. ՄԻԵԴ, Ռ.Ա.-ն և այլք ընդդեմ Լեհաստանի, Դիմում թիվ 42120/21, Մամլո հաղորդագրություն 28. 09. 2021թ. ։ Տե՛ս նաև վերը, պարբերություն 4. 1:

# 6. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Ինչպե՞ս պետք է ներկայացվի 39-րդ կանոնի համաձայն միջնորդությունը:

Միջանկյալ միջոցների համար միջնորդությունները կարող են ներկայացվել միայն «ECHR Rule 39 Site» կայքով, ֆաքսով կամ փոստով: Դատարանը չի քննում էլեկտրոնային փոստով ներկայացված միջնորդությունները:

Գործնական տեղեկություններն այն մասին, թե ինչպես է պետք ներկայացնել միջանկյալ միջոցների կիրառման միջնորդություն, տրամադրված է Դատարանի կայքում՝ դիմողների համար նախատեսված էջում:[34]

### 6.1. ECHR Rule 39 site (ՄԻԵԴ 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ԿԱՅՔ)

ՄԻԵԴ-ի 39-րդ կանոնի կայքը (https://r39.echr.coe.int), որը թողարկվել է 2022թ., հասանելի է բոլոր օգտատերերին: ՄԻԵԴ-ի ծառայությունների օգտահաշիվ է պահանջվում այս կայքն օգտագործելու համար: Օգտահաշիվ ստեղծելու համար անհրաժեշտ է տրամադրել էլեկտրոնային փոստի հասցե և ներբեռնել Authenticator բջջային հավելվածը (որը հասանելի է մի շարք հարթակներում, օրինակ՝ Apple կամ Google App Stores-ում):

Օգտահաշվի ստեղծումից հետո, միջանկյալ միջոցների համար միջնորդությունները կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Միջնորդությունները ներկայացնելու համար պարտադիր է.

1. Լրացնել "Title of the request" (միջնորդության վերնագիր) տողը: Այստեղ, պետք է համառոտ ներկայացվի միջնորդության նպատակը (օրինակ, «Մոտալուտ արտաքսման կանխում»),

2. Լրացնել դիմողներին վերաբերող բոլոր դաշտերը (անուն, բնակության հասցե, ծննդյան ամսաթիվ և քաղաքացիություն), Ներկայացուցչի տվյալները (անունը և կոնտակտային մանրամասները) և խնդրո առարկա Պետությունը,

3. Ներկայացնել առնվազն մեկ առդիր: Առդիրները սովորաբար մեկից ավելին են լինում և բաղկացած են լինում միջանկյալ միջոցի կիրառման միջնորդությունից և վերաբերելի բոլոր ապացույցներից: Առդիր բոլոր նյութերը պետք է լինեն PDF ձևաչափով:

«Գործնական ուղեցույց» փաստաթուղթը[35] պարունակում է մի բաժին՝ III. «Գործնական տեղեկություններ միջանկյալ միջոցների վերաբերյալ», որը հասանելի է Դատարանի կայքում և տրամադրում է գործնական մանրամասներ այն մասին, թե ինչպես կարելի է միջնորդություն ներկայացնել ՄԻԵԴ-ի՝ 39-րդ կանոնի կայքով:[36]

Միջնորդությունը ներկայացնելուց հետո այն համակարգում կերևա որպես «submitted» («ներկայացված»): Հավելյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը կարելի է ներկայացնել ՄԻԵԴ-ի՝ 39-րդ կանոնի կայքով միայն այն դեպքում, եթե Դատարանն է պահանջում այդպես անել: Եթե անհրաժեշտ է Դատարանին տրամադրել թարմացումներ վարույթում գտնվող միջնորդության մասին, կարելի է դա անել ֆաքսով կամ փոստով: Այն պահին, երբ Դատարանը որոշում է կայացնում միջնորդության վերաբերյալ, այն համակարգում սկսվում է երևալ «closed» («փակված») նշագրմամբ և հասանելի կլինի ևս 3 ամսվա ընթացքում:

### 6.2. Խմբային միջնորդություններ

Մի քանի դիմողների դեպքում հարկ է օգտագործել «Add/Edit other Applicants» («Ավելացնել/Խմբագրել դիմողներին») կոճակը և հետո յուրաքանչյուր դիմողի համար լրացնել անհրաժեշտ մանրամասները:




34. https://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=applicants&c=#n1365511916164_pointer (անգլ./ֆր.)
35. Դատարանի նախագահի կողմից 2003թ. մարտի 5-ին Դատարանի կանոնակարգի 32-րդ կանոնի համաձայն հրապարակված «Գործնական ուղեցույցը», որը վերանայվել է 2009թ. հոկտեմբերի 16-ին, 2011թ. հուլիսի 7-ին, 2022թ. մայիսի 3-ին և 2024թ. մարտի 28-ին: Գործնական ուղեցույց. Միջանկյալ միջոցների կիրառման միջնորդություններ (coe.int).
36. «Գործնական ուղեցույցի» III բաժինը նաև մանրամասներ է տրամադրում այն մասին, թե ինչպես կարելի է միջնորդություն ներկայացնել ֆաքսով կամ փոստով:

## 6.3. Ֆաքսով կամ փոստով ուղարկված միջնորդությունները

Միջանկյալ միջոցների կիրառման միջնորդություններ ուղարկելու համար առանձնացված ֆաքսի համարներն են. +33 3 90 21 43 50 և +33 3 88 41 39 00: Դատարանը խորհուրդ է տալիս 10 էջը գերազանցող ֆաքսերն ուղարկել մի քանի մասով, որպեսզի դրանք հնարավոր լինի ստանալ և մշակել հնարավոր լավագույն պայմաններում:

Փաստով ուղարկված միջնորդությունները պետք է ուղարկվեն հետևյալ հասցեով. European Court of Human Rights, Council of Europe, 67075 STRASBOURG CEDEX, FRANCE.

## 6.4. Լեզուն

Միջնորդությունները պետք է, ըստ հնարավորության, լինեն Պայմանավորվող պետությունների պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Այնուամենայնիվ, քանի որ Դատարանի պաշտոնական լեզուներն անգլերենն ու ֆրանսերենն են, հարկ է նախընտրել դրանց օգտագործումը՝ արագացնելու գործի ուսումնասիրությունը, եթե դիմողները (կամ նրանց ներկայացուցիչը) հավասարապես ազատ են՝ Դատարանի հետ իրենց հաղորդակցությունն այդ լեզվով վարելու հարցում:

## 6.5. Տեխնիկական չափանիշները

ՄԻԵԴ-ի 39-րդ կանոնի կայքի միջոցով 39-րդ կանոնի համաձայն միջնորդություններ ներկայացնելիս դիմողները պետք է հետևեն համակարգով պարտադրվող տեխնիկական չափանիշներին (տե՛ս պարբերություն 6.1.): Ֆաքսի կամ փոստի միջոցով ներկայացված միջնորդությունների համար կոնկրետ ձև չկա, այսպիսով ոչինչ չի խանգարում դիմողներին ներկայացնել դրանք սովորական թղթի վրա: Այնուամենայնիվ, դիմողները պետք է ամեն դեպքում հետևեն Դատարանի ցուցումներին, որոնք հասանելի են թե՛ Դատարանի կայքում,[37] թե՛ ՄԻԵԴ-ի 39-րդ կանոնի կայքում:

Հարկ է նշել, որ Դատարանի աշխատանքը հեշտացնելու համար ամեն դեպքում խորհուրդ է տրվում գործի փաստերը ներկայացնել նախքան առանձին իրավական փաստարկներ մշակելը:

Ավելին, ֆաքսով կամ փոստով ուղարկված միջնորդությունները պետք է նշագրվեն հետևյալ կերպ՝ միջնորդության տիտղոսաթերթին՝ թավ տառերով.

**«Rule 39 – Urgent** (39-րդ կանոն – հրատապ)

Հետադարձ կապ (անձի անուն, ազգանուն և կոնտակտային տվյալներ)՝ ...

Արտաքսման կամ արտահանձնման գործերով հարկ է մասնավորեցնել հետևյալը.

«Երկրից տեղափոխման նախատեսված ամսաթիվը, ժամը և տեղափոխման երկիրը՝ **...** »

Դատարանի պահանջների կատարումն ապահովելու համար դիմողները կարող են օգտագործել անհատական դիմումների ներկայացման համար կիրառվող Դիմումի պաշտոնական ձևը, որը հասանելի է Դատարանի կայքում մի քանի լեզուներով:[38] Եթե միջանկյալ միջոցների համար միջնորդությունը ներկայացվում է ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի ներքո անհատական դիմումների համատեքստում, ապա Դիմումի ձևի օգտագործումը պարտադիր է:

## 6.6. Կոնտակտային տվյալները

Մինչ 39-րդ կանոնի համաձայն միջնորդությունը գտնվում է Դատարանի վարույթում, ՄԱԿ ՓԳՀ-ը խորհուրդ է տալիս դիմողներին կամ նրանց ներկայացուցիչներին հնարավորինս հասանելի լինել: Այս նպատակով.

- Պետք է տրամադրվեն էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, իդեալական սցենարում նաև բջջային հեռախոսահամարը, որպեսզի Դատարանը կարողանա կապ հաստատել Դիմողի/ներկայացուցչի հետ հնարավորինս արագ, եթե միջնորդության մեջ որևէ տեղեկության պակաս լինի,
- Այս հեռախոսահամարը պետք է ընթեռնելի լինի և գրված լինի միջնորդության առաջին էջին:

# 7. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

## Ի՞նչը պետք է ապացուցվի և ինչպե՞ս

Թեև միջանկյալ միջոցների համար միջնորդությունները հաճախ ներկայացվում են բարդ հանգամանքներում, այդ թվում ժամանակային սահմանափակումների պայմաններում, դրանք պետք է պատշաճ կերպով հիմնավորված լինեն, այլապես Դատարանը չի քննի դրանք:

Հաստատված կամ կոնկրետ սկզբունքներ չկան առ այն, թե որ չափանիշը կամ ապացուցման շեմը պետք է կիրառվի 39-րդ կանոնի համատեքստում, թեև մի քանի հիմնարար սկզբունքներ ի հայտ են եկել Դատարանի պրակտիկայից:

Ինչպես ընդգծված է Դատարանի «Գործնական ուղեցույցում», գործի հանգամանքները պետք է գերազանցեն լրջության բարձր շեմը, որպեսզի համապատասխանեն 39-րդ կանոնին: «Միջանկյալ միջոցներ են նշանակվում միայն այն դեպքերում, երբ կա անդառնալի վնասի անմիջական վտանգի առերևույթ ապացույց և ոչ այն դեպքերում, երբ դիմողները պարզապես դժվարություններ կկրեն

37. 39-րդ կանոնի համաձայն միջնորդություն ներկայացնելու մասին Դատարանի ցուցումները հասանելի են այստեղ՝ https://www.echr.coe.int/documents/d/echr/im- procedure-eng.
38. Դիմումի ընդհանուր ձևը հասանելի է այստեղ՝ https://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=applicants/forms&c=.

միջանկյալ միջոցների բացակայության դեպքում»:[39]

Ընդհանուր կանոնն այն է, որ էական է դիմողների կողմից համապատասխան ներպետական վարույթներին վերաբերող ողջ հասանելի տեղեկության և բոլոր փաստաթղթերի (այդ թվում՝իրենց գործով ներպետական դատարանների, տրիբունալների կամ իշխանության այլ մարմինների կայացրած որոշումների) ներկայացումը և այդ վարույթների ելքը վիճարկելու պատճառաբանությունների տրամադրումը: Արտաքսման/արտահանձնման գործերով դիմողները պետք է ներկայացնեն բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են արտաքսման/արտահանձնման վարույթին և ապաստանի հայցման վարույթներին, և մանրամասնորեն բացատրեն դրանց ելքերի վիճարկման պատճառները:

Սա հատկապես կարևոր է կայացած այն սկզբունքի պատճառով, որ «այն դեպքերում, երբ ներպետական վարույթ է տեղի ունեցել, Դատարանի խնդիրը փաստերի իր սեփական գնահատականներով ներպետական դատարանների գնահատականները փոխարինելը չէ և, ընդհանուր կանոնն այն է, որ այդ դատարանների գործն է իրենց ներկայացված ապացույցները գնահատելը **(..)**: Ընդհանուր սկզբունքը ենթադրում է, որ ազգային իշխանությունները լավագույն դիրքում են՝ գնահատելու ոչ միայն փաստերը, այլև, ավելի մանրամասնորեն, վկաների վստահարժանությունը, քանի այդ նրանք են, որ հնարավորություն են ունեցել տեսնել, լսել և գնահատել համապատասխան անձի վարքագիծը»:[40]

## 7.1. Ո՞վ է կրում ապացուցման բեռը:

Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն Կոնվենցիային վերաբերելի վարույթներում ապացույցների գնահատումը սովորաբար ուղղորդվում է ***affirmanti incumbit probation*** (ապացուցման բեռը կրում է հաստատող կողմը) սկզբունքով:[41] Համապատասխանաբար, տարածքից արտաքսմանը վերաբերող գործերով. «սկզբունքորեն դիմողը պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք կարող են ապացուցել, որ կան էական հիմքեր՝ հավատալու, որ բողոքի առարկա հանդիսացող միջոցառման իրականացման դեպքում նա կենթարկվի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի ենթարկվելու իրական վտանգի»:[42]

## 7.2. Ի՞նչն ապացուցել

Միջանկյալ միջոցների համար միջնորդություններում դիմողները պետք է ողջամիտ կերպով հաստատեն անդառնալի վնասի վտանգի առկայությունը ՄԻԵԿ-ի ներքո հիմնարար իրավունքներից մեկի իրացման առնչությամբ:[43] Ողջամտորեն հաստատված վտանգը պետք է լինի անհատական մակարդակում. արտաքսումների գործերով Դատարանի նախադեպային իրավունքը հստակեցնում է, որ «ըստ ընդհանուր կանոնի, ապաստան հայցողը չի կարող ապացուցման բեռից ազատված դիտարկվել, քանի դեռ չի տրամադրել անձի՝ ապացույցներով հիմնավորված պատմությունը և, այսպիսով արտաքսման դեպքում վատ վերաբերմունքի իրական վտանգը, որը կարող է տարբերակել նրա իրավիճակը նպատակակետ երկրում առկա ընդհանուր վտանգներից»:[44]

Օրինակ՝ անհատականացված վտանգը կարող է լինել դիմողների՝ իրենց ծագման երկրում քաղաքական, էթնիկ կամ կրոնական պատճառներով հետապնդվելու վախը:[45] Այսպիսի անհատականացված վտանգը պետք է ողջամտորեն հաստատվի, օրինակ, այնպիսի ապացույցներով, որոնք ի ցույց են դնում, որ դիմողները կրոնական կամ էթնիկ փոքրամասնության անդամներ են և ծագման երկրում նրանց հետապնդումը հայտնի փաստ է, կամ որ նրանք արտահայտել են քաղաքական տեսակետներ, որոնք այդ երկրում հետապնդման են հանգեցրել:

Ի տարբերություն սրա, ընդհանրական վտանգը միշտ չէ, որ բավարար է լինում միջնակյալ միջոցների համար միջնորդությունը հիմնավորելու համար: Ընդհանրական վտանգը կարող է լինել ծագման երկրում ընդհանուր անապահովության իրավիճակի հետ կապված դիմողների փորձառությունը, ինչը, այնուամենայնիվ, չի հանգեցնում դիմողների անձնական անվտանգության կոնկրետ և ուղիղ սպառնալիքի:

## 7.3. Ի՞նչ չափով ապացուցել:

39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցների հայցման միջնորդությունները չպետք է բավարարեն ապացուցման այն չափանիշը, որը կիրառվում է ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն անհատական դիմումների նկատմամբ: Ժամկետների սղությամբ պայմանավորված՝ այդպես վարվելը դժվար կլինի 39-րդ հոդվածի համաձայն միջնորդությունների համար: Ավելին, միջանկյալ միջոցի նշանակման դեպքում, Դատարանը խորապես չի վերլուծում գործը , և անշուշտ, այն հաճախ չի տիրապետում ողջ տեղեկությանը, որն անհրաժեշտ է այդպես վարվելու համար:[46] Այնուամենայնիվ, միջանկյալ միջոց հայցելիս դիմողները պետք է հնարավորինս ապացուցեն,

39. Գործնական ուղեցույց:
40. ՄԻԵԴ, Ֆ.Գ. ընդդեմ Շվեդիայի [ՄՊ], Դիմում թիվ 43611/11, 23 մարտի 2016թ., պարբ. 118 և այնտեղ մեջբերված նախադեպային իրավունքը
41. ՄԻԵԴ, Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, Դիմում թիվ 55723/00, 9 հունիսի 2005թ., պարբ. 79
42. ՄԻԵԴ, Սաադին ընդդեմ Իտալիայի [ՄՊ], Դիմում թիվ 37201/06, 28 փետրվարի 2008թ., պարբ.. 129
43. ՄԻԵԴ, Փալադին ընդդեմ Մոլդովայի [ՄՊ], Դիմում թիվ 39806/05, 10 մարտի 2009թ., պարբ. 89
44. ՄԻԵԴ, Ջ.Ք. և այլք ընդդեմ Շվեդիայի [ՄՊ], Դիմում թիվ 59166/12, 23 օգոստոսի 2016թ., պարբ. 94
45. ՄԻԵԴ, Ֆ.Հ. ընդդեմ Շվեդիայի, Դիմում թիվ 32621/06, 20 հունվարի 2009թ.
46. ՄԻԵԴ, Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի [ՄՊ], Դիմում թիվ 30696/09, 21 հունվարի 2011թ., պարբ. 355

որ էական հիմքեր կան կարծելու, որ միջոցների բացակայության պարագայում նրանք կբախվեն Կոնվենցիայով ամրագրված իրենց իրավունքների անդառնալի վնասի անմիջական վտանգին:

> Դատարանը եզրակացրել է, որ «միջանկյալ միջոցների բուն բնույթից է բխում այն, որ տվյալ գործով դրանց կիրառման մասին որոշումը հաճախ կայացվում է շատ կարճ ժամանակամիջոցում **(...)**: Հետևաբար, գործի լիարժեք փաստերը հաճախ չվճռված են մնում, մինչև Դատարանի կողմից գործի ըստ էության վճռի կայացումը **(...)**: Դատարանի՝ այսպիսի վճռի կայացման կարողությունը պահպանելու նպատակով է**(...)**, որ կիրառվում են այսպիսի միջոցներ: Մինչ այդ պահը Դատարանի համար գուցե անխուսափելի լինի միջանկյալ միջոցի կիրառումն այն փաստերի հիման վրա, որոնք, չնայած այսպիսի միջոցառումների օգտին *առերևույթ* հիմնավորումներ ներկայացնելուն, հետագայում ավելացվում են կամ վիճարկվում մինչև այն կետը, երբ կասկածի տակ է առնվում դրանց հիմնավորվածությունը»:[47]

## 7.4 Ինչպե՞ս պետք է ապացուցվի անդառնալի վնասի անմիջական վտանգը:

Դիմողները պետք է մանրամասն ներկայացնեն իրենց վախերի հիմքում ընկած հանգամանքները և նրանց սպառնացող ենթադրյալ վտանգների բնույթը: Իրադարձությունների՝ նրանց նկարագրությունը պետք է հնարավորինս մանրամասն լինի. այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկություններին կամ ներպետական վարույթներին պարզապես հղում անելը բավարար չէ:

Դիմողները պետք է տրամադրեն հասանելի ողջ փաստաթղթային ապացուցային բազան՝ հիմնավորելու իրենց սպառնացող ենթադրյալ վտանգները. վախի զուտ արտահայտումը հազվադեպ է բավարար ապացույց համարվում:[48] Դատարանի վարույթներն առաջնորդվում են ապացույցների ազատ ընդունման և գնահատման սկզբունքով,[49] այսպիսով դիմողները կարող են հույս դնել ապացույցների բազմապիսի տեսակների վրա (օրինակ՝ թարմ բժշկական եզրակացությունները, լուսանկարները, դիմողի խոցելիությունը ցույց տվող փաստաթղթերը, մամուլի հոդվածները կամ դիմողի իրադրությանը վերաբերող ռեպորտաժները և այլն):

Թեև վտանգի առկայությունը որոշելիս Դատարանն առաջնայնորեն հիմնվում է դիմողի ներկա և ապագա իրավիճակով, անցյալի մասին տեղեկությունները, այդ թվում՝ դիմողի նախկին փորձառությունները, նույնպես կարող են վերաբերելի լինել: Օրինակ՝ միջազգային պաշտպանություն հայցող դիմողները, որոնք վախենում են իրենց կյանքի համար իրենց ծագման երկրում, կարող են ներկայացնել անցյալում վատ վերաբերմունքի ապացույցներ՝ այսպիսի վտանգի առկայությունը հիմնավորելու համար: ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն անհատական դիմումները, ինչպես նաև 39-րդ հոդվածի համաձայն միջանկյալ միջոցների միջնորդությունները պետք է համակցեն դիմողի նախկին փորձառությունների տարրերը թարմացված անձնական (և, եթե վերաբերելի է, ընտանեկան) տեղեկատվության հետ:

Թեև դիմողները պետք է միշտ ողջամտորեն հաստատեն անհատական վտանգի առկայությունը (տե՛ս վերը, պարբերություն 7.2), այսպիսի վտանգի մասին կարելի է նաև ենթադրել հանրածանոթ ընդհանուր իրավիճակից: Օրինակ, միջազգային պաշտպանություն հայցող դիմողները, որոնք վախենում են իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով հետապնդումներից, կարող են հղում անել վստահարժան տեղեկատվության, որը փաստում է, որ իրենց ծագման երկրում ԼԳԲՏԻՔ+ անձինք հետապնդվում են և սովորաբար ենթարկվում բռնության:

Ամփոփելով՝ թեև 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցների համար միջնորդությունները պետք է գլխավորապես կենտրոնանան դիմողի անձնական իրավիճակի վրա, կարելի է ներկայացնել նաև ընդհանուր տեղեկություններ՝ հիմնավորելու հայցապնդումները, այդ թվում՝ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից համապատասխան և վերջերս կազմված փաստաթղթերը[50] և արտաքին աղբյուրներից ստացող տեղեկությունները (օրինակ՝ հեղինակավոր հասարակական կազմակերպություններից, ՄԱԿ-ից և ազգային գերատեսչություններից):

---

47. Նույն տեղում, պարբ 355.
48. ՄԻԵԿ-ի մասին Դատարանի նախադեպային որոշումները ցույց են տալիս, որ վերադարձից հետո հետապնդումների ենթարկվելու վախի արտահայտումը սոսկ և ինքնին «իրական վտանգին» համարժեք չէ: Երբ քննարկվում է, թե արդյոք անդառնալի վնասի ենթադրյալ վտանգն իրական է, թե ոչ, Դատարանը հաշվի է առնում փաստերի և հանգամանքների համակցությունը, այդ թվում՝ դիմողի կողմից ներկայացված փաստերի վստահարժանությունը, երկրում ընդհանուր իրավիճակը և, ըստ վերաբերելիության, ՄԱԿ ՓԳՀ դիրքորոշումը և համապատասխան զեկույցները:
49. ՄԻԵԴ, Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ], Դիմում թիվ 43577/98 և 43579/98, 6 հուլիսի 2005թ., պարբ. 147.
50. Այստեղ կարող են ներառվել անհատին վերաբերելի փաստաթղթեր, ինչպիսիք են ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրված փախստականի վկայականը, ծագման երկրի մասին տեղեկությունները, վերադարձի մասին ուղղորդող գրությունները և դիրքորոշումները:

## 7.5. Վստահարժանությունը

Իրադարձությունների մասին դիմողի ներկայացրած տեղեկությունների վստահարժանության գնահատման ժամանակ Դատարանը քննում է՝ արդյո՞ք 39-րդ հոդվածի համաձայն միջանկյալ միջոցներ հայցող միջնորդություններում տրամադրված պնդումները և տեղեկությունները համապատասխանում են ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն անհատական դիմումում տրամադրված տեղեկություններին, թե՞ ոչ:

Հետևաբար, կարևոր է, որ երկուսում բերված պնդումներն ու տեղեկությունները համապատասխանեն: Այս կապակցությամբ և միջանկյալ միջոցների հայցմանը զուգահեռ ծայրահեղ կարևոր է հիմնավորել ապաստանի հայցերը ներպետական մակարդակում՝ ներպետական վարույթի սկզբից ևեթ:[51] Դատարանի համար հետագայում ներկայացված տեղեկությունները, որոնք կարող էին վարույթի ավելի վաղ փուլերում ներկայացված լինել, հազվադեպ եմ համոզիչ լինում: Ողջ վերաբերելի տեղեկատվության վաղ ներկայացումը՝ սկզբնական հայցի հետ միասին, կարող է օգնել համոզել Դատարանին դիմողի բարեխղճության և հայցի ընդհանուր վստահարժանության մեջ:

> «I–) Միջանկյալ միջոցների միջնորդությունները պետք է լինեն անհատականացված, լիովին պատճառաբանված և ուղարկվեն ողջ վերաբերելի տեղեկության հետ՝ ներառելով ներպետական իշխանությունների և դատարանների որոշումները, և ուղարկվեն արտաքսման նախատեսվող ժամկետից առաջ՝ վաղօրոք: (. . .) Հարկ է շեշտել, որ Գործնական ուղեցույցում ներկայացված պայմաններին չհամապատասխանելը կարող է հանգեցնել այնպիսի դեպքերի, որոնք չեն ընդունվի Դատարանի կողմից քննության»:
>
> – ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՅՑՈՂ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, 11 ՓԵՏՐՎԱՐԻ, 2011Թ.

## 7.6. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն:

Միջնորդությունները ՊԵՏՔ Է ուղեկցվեն բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերով: Անպայման չէ, որ Դատարանը կապ հաստատի այն դիմողների հետ, որոնց միջանկյալ միջոցների միջնորդությունները թերի են, Դատարանը նաև կարող է չքննել թերի միջնորդությունները:

Ներկայացվելիք փաստաթղթերը ներառում են.

- Փաստաթղթային ապացույցներ՝ ապացուցելու դիմողների վախերը և ենթադրյալ վտանգները (օրինակ՝ վերջերս կազմված բժշկական եզրակացությունները, լուսանկարները, դիմողի խոցելիությունը ցույց տվող փաստաթղթերը, մամուլի հոդվածները կամ դիմողի իրավիճակին վերաբերող ռեպորտաժները և այլն),
- Պայմանավորվող կողմ հանդիսացող պետությունում ընթացող ներպետական վարույթների փաստաթղթերը (օրինակ՝ միջազգային պաշտպանություն հայցող անձանց համար, նրանց ապաստան հայցելու միջնորդության և համապատասխան ապաստանի հայցման վարույթի վերաբերյալ փաստաթղթերը, ինչպիսիք են՝ ներպետական մարմինների, դատական ատյանների որոշումների, ազգային իշխանություններին և դատարաններին ներկայացված միջնորդությունների պատճենները և այլն),
- Արտաքսման/արտահանձնման գործերով բոլոր վերաբերելի փաստաթղթերը (օրինակ՝ արտաքսման ամսաթվի մասին պաշտոնական ծանուցումը, խուզարկության կարգադրագրերը, դատապարտումները, դիմողի մասին մամուլում տպագրված հոդվածները կամ ռեպորտաժները, երկրին վերաբերող զեկույցները և այլն):

Այլ նյութերը, որոնք ուսումնասիրվում են՝ դիմողի պնդումները հիմնավորելու համար, պետք է նաև ներառեն, օրինակ՝

- ՀԿ-ների/ՄԱԿ գործակալությունների կազմած փաստաթղթերը,
- Վերաբերելի մամլո հաղորդագրություններ,
- լուրերը կամ ակադեմիական հոդվածներ:

Բոլոր ներկայացված փաստաթղթերը պետք է լինեն

- ամբողջական տարբերակով,
- դրանց բնագրի լեզվով (պայմանով, որ այն ՄԻԵԿ կողմ հանդիսացող պետության պաշտոնական լեզուներից մեկն է),
- լուսապատճեններ (Դատարանը փաստաթղթերը չի վերադարձնելու դիմողներին):

51. ՄԻԵԴ, Նասիմին ընդդեմ Շվեդիա, Դիմում թիվ 38865/02, 2004թ. մարտի16-ի որոշում

# 8. 39-ՐԴ ԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

## Ե՞րբ պետք է ներկայացվի 39-րդ կանոնի համաձայն միջնորդությունը:

### 8.1. Անմիջական վտանգ

Ընդհանուր առմամբ, 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցների միջնորդությունները պետք է ներկայացվեն ՄԻԵԿ-ի համապատասխան իրավունք(ներ)ի նկատմամբ անմիջական վտանգի ի հայտ գալուն պես: Օրինակ, արտաքսման գործերում միջնորդությունը պետք է ներկայացվի արտաքսման անմիջական վտանգի ի հայտ գալուն պես: Եթե արտաքսման ամսաթիվը հայտնի է, ապա միջնորդությունը պետք է ներկայացվի իդեալական դեպքում արտաքսման նշանակված օրվանից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ: Եթե արտաքսման ամսաթիվը հայտնի չէ և հայտնի է դառնում արտաքսման պահից քիչ առաջ, ապա այս հանգամանքը պետք է հստակ նշել և բացատրել միջնորդությունում:

Այնտեղ, որտեղ ներպետական ատյաններում կայացված վերջնական որոշումը դեռ չի ընդունվել, բայց դրա ընդունումը մոտալուտ է, և կա անմիջական կիրարկման ռիսկ, միջանկյալ միջոցների միջնորդությունը պետք է ներկայացվի առանց այդ որոշմանը սպասելու՝ հստակ նշելով այն ամսաթիվը, որի ընթացքում այդ որոշումն ընդունվելու է և որ միջնորդությունը ենթակա է ներպետական վերջնական որոշման, որը բացասական է լինելու:

### 8.2 Կասեցնող ազդեցությամբ ներպետական իրավական պաշտպանության միջոցներ

Արտաքսման կամ արտահանձնման գործերով դիմողները պետք է դիմեն ներպետական իրավական միջոցների, որոնք կարող են կասեցնել արտաքսումը, նախքան միջանկյալ միջոցների համար Դատարանին դիմելը: Երբ դիմողը չի սպառել ներպետական մակարդակում կասեցնող ազդեցություն ունեցող իրավական պաշտպանության միջոցները, Դատարանը չի կիրառի 39-րդ կանոնը՝ արտաքսումը կանխելու համար:

Կարևոր է նկատի առնել, որ Դատարանի նպատակն այն չէ, որ այն հանդես գա որպես մարդու իրավունքի պաշտպանության ներպետական համակարգերի օժանդակ կառուցակարգ: Այդ իսկ պատճառով անգամ միջանկյալ միջոցների միջնորդությունների համատեքստում հատուկ ուշադրություն է պետք դարձնել հասանելի իրավական պաշտպանության միջոցներին և դրանց արդյունավետությանը:[52]

### 8.3 Ներկայացման ժամկետները

39-րդ կանոնի համաձայն միջնորդությունները պետք է ներկայացվեն բավականին ժամանակ առաջ՝ Դատարանին տալով առնվազն մեկ աշխատանքային օր՝ դրանցով զբաղվելու համար: Արտաքսման գործերով սա նշանակում է առնվազն մեկ աշխատանքային օր արտաքսման նախատեսվող օրվանից առաջ:[53]

Եթե Դատարանը 39-րդ կանոնի համաձայն բազմաթիվ միջնորդություններ է ստանում, որևէ երաշխիք չկա, որ այդ միջնորդությունները կքննվեն արագ, թեև Դատարանը կանի առավելագույն հնարավորը՝ զբաղվելու ուշ ստացված, սակայն ուշադրության արժանի գործերով, որոնց դեպքում ժամանակին դիմելու անկարողությունը դիմողների մեղքով չէ:

### 8.4 Դատարանի աշխատանքային ժամերը

Միջանկյալ միջոցների միջնորդությունները ստացվում են Քարտուղարությունում երկուշաբթիից ուրբաթ՝ 8:00 – 16:00 (Ստրասբուրգի տեղական ժամանակով՝ GMT+1): 16:00-ից հետո ստացված միջնորդությունները սովորաբար այդ նույն օրը չեն դիտարկվում: Շաբաթ-կիրակի օրերին և Ֆրանսիայում պետական տոների օրերին ստացված միջնորդությունները չեն դիտարկվում այդ նույն օրերին, այլ մուտքագրվում են հաջորդ աշխատանքային օրը: Քրիստոնեական տոների ընթացքում Դատարանի քարտուղարությունը հերթապահության համակարգ է գործարկում, որը զբաղվում է 39-րդ կանոնի համաձայն հրատապ միջնորդություններով, սակայն համակարգը չի գործում դեկտեմբերի 25-ին և 26-ին և հունվարի 1-ին: Պետական և այլ տոների ցանկը, որոնց հետևում է Դատարանը, հասանելի է Դատարանի կայքում:[54]

### 8.5 Արտաքսման օրն ու ժամը

Տարածքից արտաքսման գործերով դիմողները պետք է բոլոր դեպքերում նշեն իրենց արտաքսման ակնկալվող օրն ու ժամը, քանի որ այս տարրն անմիջապես կապ ունի վտանգի մոտալուտ բնույթի որոշման հետ: Եթե դիմողները չեն կարող տրամադրել այս տեղեկությունը, այն պետք է հստակ նշվի և բացատրվի 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցների կիրառման միջնորդություններում: Դիմողները պետք է Դատարանին տեղեկացնեն հետագա բոլոր զարգացումների մասին, և ըստ վերաբերելիության, բացատրեն, թե ինչու են իրենց արտաքսումը մոտալուտ համարում:

---

52. Այս պահանջը չպետք է շփոթել Դատարան ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի ներքո անհատական դիմում ուղարկելուց առաջ ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառած լինելու պաշտոնական պարտավորության հետ, որին հղում է արվում ՄԻԵԿ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասում, թեև այս երկուսը կարող են գործնականում համընկնել:
53. Այն պետական և այլ տոների ցանկին, որոնց ընթացքում Դատարանի քարտուղարությունը փակ է, կարելի է ծանոթանալ Դատարանի կայքում՝ www. echr. coe. int/contact.
54. Էջում կոնտակտային տեղեկությունները՝ https://www. echr. coe. int/Pages/home. aspx?p=contact&c=.

# 9. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄԸ

## Ինչպե՞ս է քննվում միջնորդությունը:

Միջնորդությունը ներկայացնելուց հետո Դատարանն այն քննում է հնարավորինս արագ: Ընթացակարգը գրավոր է, և յուրաքանչյուր միջնորդություն քննվում է անհատապես: Խմբային միջնորդությունները կարող են միասնաբար քննվել:

### 9.1. 39-րդ կանոնի ընթացակարգում որոշումների կայացման մարմինները (վերցված է Դատարանի «Գործնական ուղեցույցից»)

Դատարանի՝ միջանկյալ միջոցների միջնորդությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու լիազորությունն իրացնում են հերթապահ դատավորները կամ, ըստ անհրաժեշտության, Սեկցիայի նախագահը, Պալատը, Մեծ պալատի նախագահը, Մեծ պալատը կամ Դատարանի նախագահը (39-րդ կանոնի 2-րդ կետ):

Հերթապահ դատավորները 8-րդ կանոնի համաձայն որպես հինգ Սեկցիաների փոխնախագահներ ընտրված դատավորներն են: Նրանք նշանակվում են Դատարանի նախագահի կողմից՝ ըստ 39-րդ կանոնի 5-րդ կետի՝ որոշումներ կայացնելու միջանկյալ միջոցների միջնորդությունների մասին: 2022թ. ի վեր բոլոր հինգ սեկցիաների փոխնախագահները հանդես են գալիս որպես հերթապահ դատավորներ: Գործնականում այն հերթապահ դատավորները, որոնք ընտրվել են կոնկրետ երկրից կամ կոնկրետ երկրի քաղաքացի են, չեն քննում այդ Պայմանավորվող կողմի դեմ միջանկյալ միջոցի կիրառման միջնորդությունները: 39-րդ կանոնի փոփոխված տարբերակում Դատարանը լիազումար նիստով որոշեց ներմուծել կոնկրետ իրավական հիմք, որը թույլ է տալիս Դատարանի նախագահին, ըստ անհրաժեշտության, միջանկյալ միջոց կիրառել:

Նոր անհատական դիմումներում միջանկյալ միջոցների կիրառման միջնորդություններն առաջնայնորեն քննվում են հերթապահ դատավորների կողմից՝ Դատարանի քարտուղարության կազմում գործող մասնագիտացված ստորաբաժանման աջակցությամբ: Հերթապահ դատավորները միջանկյալ միջոցի միջնորդությունը 39-րդ կանոնի 2-րդ մասում թվարկված այլ որոշում կայացնողներից մեկին, այդ թվում՝ կոլեգիալ մարմիններին վերահասցեագրելու հնարավորություն ունեն: Վերահասցեագրումները կարող են տեղի ունենալ բազմապիսի իրավիճակներում և կախված են լինում միջնորդության բնույթից, այն գործից, որի շրջանակներում արվում է միջնորդությունը և հրատապության աստիճանից: Վերջինը կարող է նշանակել, որ կոլեգիալ մարմնին վերահասցեագրումը հնարավոր չէ այն դեպքերում, երբ հերթապահ դատավորը կարող է որոշել ժամանակավորապես կիրառել 39-րդ կանոնը՝ նպատակ ունենալով, ի թիվս այլոց, դյուրացնել այսպիսի մարմնի կողմից միջանկյալ միջոցի միջնորդության հետագա քննությունը: Կոլեգիալ մարմնի կողմից միջնորդության քննության մասին որոշումը կայացնում է հենց Դատարանը: Միջանկյալ միջոցների միջնորդությունները, որոնք ներկայացվում են միջպետական դիմումներում, Մեծ պալատի վարույթում գտնվող անհատական դիմումներում և արդեն Սեկցիաներին մակագրված և հաղորդակցված անհատական դիմումներում, հիմնականում քննվում են Դատարանի նախագահի, Մեծ պալատի նախագահի կամ Սեկցիաների նախագահների կողմից: Կոլեգիալ մարմնին վերահասցեագրման հնարավորությունը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ որոշման կայացման լիազորությունն առաջնայնորեն Դատարանի նախագահինն է, Մեծ պալատի նախագահինը կամ Սեկցիայի նախագահներինը:

### 9.2 Շրջանակից դուրս միջնորդությունները

Եթե միջնորդությունը հստակորեն չի վերաբերում մի իրավունքի, որը, ըստ Դատարանի պրակտիկայի, կարող է պաշտպանվել 39-րդ կանոնով, Դիմողը նամակ է ստանում Քարտուղարությունից, որում նշվում է, որ միջնորդությունը 39-րդ կանոնի շրջանակից դուրս է և չի ներկայացվում դատավորին՝ որոշում կայացնելու:

### 9.3 Չհիմնավորված կամ թերի միջնորդություններ

Եթե միջնորդությունը բավարար հիմնավորված չէ կամ չի ներառում բավարար փաստաթղթեր, դիմողը Քարտուղարությունից նամակ է ստանում, որում նշվում է, որ միջնորդությունը չի ներկայացվելու դատավորին՝ որոշման կայացման համար: Օրինակ, արտաքսմանը վերաբերող դեպքերում Դատարանը չի քննի այն միջնորդությունը, որում արտաքսման դեպքում սպառնացող վտանգը հիմնավորված չէ. Դատարանը թերի կհամարի այն միջնորդությունը, որում տեղեկություններ չեն տրամադրվում արտաքսման նախատեսված ամսաթվի մասին կամ որում փաստաթղթեր չեն տրամադրվել այդ հարցի քննության ներպետական վարույթների մասին: Չհիմնավորված միջնորդության մյուս օրինակը վերաբերում է պետության տարածքից ենթադրյալ ոչ պաշտոնական հեռացմանը («հետդարձ»), որի դեպքում դիմողները չեն տրամադրում պետության տարածքում իրենց ներկայության ապացույցներ:

Քարտուղարության նամակը սովորաբար նշում է, թե որ հարցերն են, որ ավելի լավ հիմնավորման կարիք ունեն և որ փաստաթղթերն են պակաս: Թեև միջնորդություններն արագ լրամշակելու պարտականությունը դիմողներինն է, Քարտուղարության նամակը կարող է նաև պատասխանի վերջնաժամկետ ներառել: Եթե մինչև այս վերջնաժամկետը պատասխան չի ստացվում, գործի նյութերը ժամանակին ոչնչացվում են՝ առանց լրացուցիչ ծանուցման:

## 9.4 Միջանկյալ միջոցների կիրառման միջնորդությունների մասին դատարանի որոշումները

39-րդ կանոնի ներքո որոշումների կայացման գործընթացի վերանայումից ի վեր, որը ձեռնարկել էր Դատարանը 2023 և 2024թթ. լիագումար նիստերում, անկախ ընդունվող որոշման բնույթից (օրինակ՝ միջանկյալ միջոցների կիրառում, միջնորդությունների մերժում, միջնորդությունների քննության հետաձգում, գոյություն ունեցող միջանկյալ միջոցների վերացում), Դատարանի՝ միջանկյալ միջոցների վերաբերյալ բոլոր որոշումների մասին կողմերը ծանուցվում են որոշմամբ, որը ստորագրում է հերթապահ դատավորը, Սեկցիայի կամ Մեծ պալատի նախագահը կամ Դատարանի նախագահը, ըստ վերաբերելիության: Միջանկյալ միջոցների ընթացակարգում որոշում կայացնող դատավորների անունները կանոնավորապես նշվում են որոշումներում:

Որոշումներն ուղեկցվում են Քարտուղարության նամակով, որում ներառվում են ընթացակարգի մասին տեղեկություններ, ինչպես նաև կողմերին հղվող ցուցումներ կամ միջնորդություններ: Դիմողները միջանկյալ միջոցների համար միջնորդությունների վերաբերյալ Դատարանի որոշումների մասին տեղեկանում են ՄԻԵԿ 39-րդ հոդվածի կայքից, ֆաքսով կամ փոստով:

39-րդ կանոնի շրջանակում միջանկյալ միջոցների համար պատշաճ կերպով հիմնավորված միջնորդությունները ներկայացվում են Դատարանի դատական կազմին՝ որոշում կայացնելու համար: Օրինակ, եթե արտաքսման սպառնալիքի առջև կանգնած դիմողների կողմից ներկայացված միջնորդությունները Դատարանին բավարար մանրամասներ և ապացույցներ են տրամադրում այն փաստի մասին, որ ընդունող երկրում նրանք կենթարկվեն հետապնդումների քաղաքական, էթնիկ կամ կրոնական պատճառներով,[55] վատ վերաբերմունքի՝ իրենց սեռական կողմնորոշման պատճառով,[56] կամ մահվան՝ իշխանությունների ձեռքով:[57]

Միջանկյալ միջոցների միջնորդությունների մասին Դատարանի որոշումներն ընդհանուր առմամբ չեն պատճառաբանվում և ենթակա չեն բողոքարկման: Որոշումները պարզապես հաղորդակցվում են վարույթի կողմերին և չեն հրապարակվում HUDOC-ի տվյալների շտեմարանում, եթե դրանք Քարտուղարության կողմից տարածվող Մամլո հաղորդագրության առարկա չեն:[58]

### Միջանկյալ միջոց չկիրառելու որոշում

Ներկայացված նյութերի հիման վրա Դատարանը կարող է մերժել հայցված միջանկյալ միջոցների կիրառումը: 39-րդ կանոնի համաձայն միջնորդությունը կարող է մերժվել բազմապիսի պատճառներով: Օրինակ՝ տարածքից արտաքսմանը վերաբերող գործերով, քանի որ արտաքսման վտանգն անմիջական չէ կամ արտաքսումը չի հանգեցնելու անդառնալի վնասի անմիջական վտանգի:

39-րդ կանոնի համաձայն միջնորդության մերժման պատճառները նշում է միայն Դատարանը *ad hoc* հիմունքով: Միջնորդությունը վաղաժամ համարելու դեպքում միշտ համապատասխան հստակեցում է արվում որոշման մեջ:

### Միջնորդության քննությունը կասեցնելու որոշում

Դատարանը կարող է նաև որոշել կասեցնել միջանկյալ միջոցի միջնորդության քննությունը և կողմերին հրավիրել տեղեկատվություն տրամադրել այն դեպքերում, երբ հրատապության աստիճանը թույլ է տալիս դիմել նման քայլի այն գործերով, որտեղ դիմողների կողմից Դատարանին ներկայացված տեղեկությունները բավարար չեն, որպեսզի հնարավորություն ընձեռեն Դատարանին քննել միջնորդությունը և որոնցում իրատեսական է համարվում մինչև որոշում ընդունելը պատասխանող Պայմանավորվող կողմից տեղեկություններ պահանջելը: Երբ միջնորդության քննությունը կասեցվում է, պատասխանող Պայմանավորվող կողմը կամ երկու կողմերից պահանջվում է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, ըստ 54-րդ կանոնի 2-րդ մասի «ա» կետի՝ հստակ սահմանված ժամկետում: Խնդրո առարկա ժամկետի տևողությունը կախված է գործի հանգամանքներից և միջնորդության հրատապության աստիճանից: Կողմերից տեղեկատվության ստացման պահին Դատարանը կարող է կա՛մ նորից կասեցնել միջնորդության քննությունը և լրացուցիչ հարցեր ուղղել կողմերին, կա՛մ իր որոշումը կայացնել միջանկյալ միջոցների համար միջնորդության առնչությամբ:

Միջանկյալ միջոցի կիրառումից հետո Դատարանը կարող է նաև հանդես գալ Կողմերին ուղղված հարցերով և մեկնաբանությունների պահանջներով (տե՛ս ստորև):

55. Օրինակ, ՄԻԵԴ, [Ֆ. Հ.-ը ընդդեմ Շվեդիայի,](#) Դիմում թիվ 32621/06, 20 հունվարի 2009թ., պարբ. 39–46
56. Օրինակ՝ ՄԻԵԴ, [Մ.Ե.-ն ընդդեմ Շվեդիայի [ՄՊ]](#), Դիմում թիվ 71398/12, 8 ապրիլի 2015թ., պարբ. 4
57. Օրինակ՝ ՄԻԵԴ, [Ջաբարին ընդդեմ Թուրքիայի](#), Դիմում թիվ 40035/98, 11 հուլիսի 2000, պարբ. 6
58. Մամլո հաղորդագրությունները ներկայացված են HUDOC–ի տվյալների շտեմարանում առանձին էջով. https://hudoc.echr.coe.int/eng-press իսկ Միջանկյալ միջոցների մասին մամլո հաղորդագրությունները կարելի է գտնել ընտրելով էկրանի ձախ կողմում «Interim measures» (Միջանկյալ միջոցներ) «Document type» (Փաստաթղթի տեսակը) տակ https://hudoc.echr.coe.int/eng-press#{%22documentcollectionid%22:[%22R39%22]}.

### Միջանկյալ միջոցի կիրառման մասին որոշումը

Իրեն ներկայացված նյութերի հիման վրա Դատարանը կարող է որոշել միջանկյալ միջոցներ կիրառել:

Դատարանը կարող է միջանկյալ միջոցներ կիրառել մինչև հետագա ծանուցումը, Դատարանի առջև վարույթի տևողության կամ սահմանափակ ժամկետով՝ կախված գործի հանգամանքներից:

Միջանկյալ միջոցները սահմանափակ ժամկետով կիրառվում են մի շարք տարբեր պատճառներով, ինչպիսիք են՝ Դատարանի պահանջով կողմերից համապատասխան տեղեկությունների ստացումը, ներպետական դատարաններին միջանկյալ միջոցի միջնորդության առարկայի լիարժեք քննության հնարավորություն ընձեռելը, միջնորդության՝ կոլեգիալ մարմնի կողմից քննարկման և հանդիպում նշանակելու համար ավելի շատ ժամանակի անհրաժեշտությունը. կամ հերթապահ դատավորի կարծիքն առ այն, թե ավելի երկար ժամանակ է անհրաժեշտ որոշում կայացնելու համար:

Դա կարող է արվել Դատարանի նախաձեռնությամբ կամ դիմողների (կամ նրանց ներկայացուցչի պահանջով):

Գործնականում Դատարանը հաճախ 39-րդ կանոնը կիրառում է սահմանափակ ժամկետով, երբ գործի նյութերի համար լրացուցիչ տեղեկություններ են պահանջվում (բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայող տեղեկատվությունն այնքան կարևոր չէ, որ միջնորդությունը թերի համարվի, տե՛ս վերը՝ պարբերություն 9.4): Եթե Դատարանը կիրառում է միջոցները ժամանակային սահմանափակումով, միևնույն ժամանակ տեղեկատվություն պահանջելով, ակնկալվում է, որ կողմերից մեկը կամ երկուսը կպատասխանեն հարցերին՝ նախքան այդ պատասխանները տեղեկատվության տրամադրման կամ մեկնաբանությունների համար մյուս կողմին փոխանցելը: Օրինակ, տարածքից ոչ պաշտոնական հեռացման առաջնային վտանգ պարունակող գործերում Դատարանը կարող է նշել, որ դիմողները չպետք է հեռացվեն, քանի դեռ Դատարանը կողմերից լրացուցիչ տեղեկություններ է պահանջել (օրինակ՝ կապված դիմողների գտնվելու ճշգրիտ վայրի հետ և առ այն, թե արդյոք նրանք հնարավորություն են ունեցել միջազգային պաշտպանություն հայցել):

Այն դեպքերում, երբ Դատարանը լրացուցիչ տեղեկություններ է պահանջում, Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 2-րդ կետի «ա» կետի համաձայն, երկու կողմերն էլ պարտավոր են տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը սահմանված ժամկետում: Քննարկվող ժամկետի տևողությունը կախված է գործի հանգամանքներից և պահանջի հրատապությունից: Նման դեպքերում, կողմերից տեղեկատվություն ստանալուց հետո, Դատարանը կարող է որոշել երկարացնել, չերկարացնել կամ վերացնել գործող ցանկացած միջանկյալ միջոց:

## 9.5. Որոշումների հաղորդակցումը

Դիմողները կամ նրանց ներկայացուցիչները տեղեկացվում են 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցներ կիրառելու կամ մերժելու Դատարանի որոշման մասին՝ պաշտոնական որոշմամբ, որն ուղարկվում է 39-րդ կանոնի կայքի միջոցով, կամ էլ.փոստով և փոստով, եթե միջնորդությունը կայքի միջոցով չի ներկայացվել: Այն դեպքում, երբ Դատարանը որոշում է 39-րդ կանոնի միջանկյալ միջոց կիրառել, պատասխանող պետությունը նույնպես տեղեկացվում է: Եթե շտապ միջանկյալ միջոցներ են պահանջվում, ապա Դատարանը կարող է նախ հեռախոսով տեղեկացնել կողմերին՝ նախքան իր որոշումը հաստատող նամակն առաքելը:

Եթե միջանկյալ միջոցի մասին միջնորդությունը ներկայացվել է մինչև ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն անհատական դիմում ներկայացնելը, ապա Դատարանի որոշումը (նույնիսկ եթե այն բացասական է) առաջարկում է Դիմողին սահմանված ժամկետում ներկայացնել պատշաճ կերպով լրացված դիմումի ձևը (այսինքն՝ անհատական դիմում՝ ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն): Եթե Դիմողը մինչև այս վերջնաժամկետը չպատասխանի Դատարանին, ապա դիմումը կարող է հանվել գործերի ցանկից՝ առանց լրացուցիչ ծանուցման:

## 9.6. Հետագա գործողություններ

Դիմողները, ովքեր դիմում են 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցի համար, պետք է մշտապես և անպայմանորեն պատասխանեն Դատարանի Քարտուղարության նամակագրությանը: Եթե միջոցի կիրառումը մերժվել է, նրանք պետք է տեղեկացնեն Դատարանին, թե արդյոք ցանկանու՞մ են հետամուտ լինել դիմումին, թե՞ ոչ: Եթե որևէ միջոց է կիրառվել, նրանք պետք է պարբերաբար և անհապաղ տեղեկացնեն Դատարանին ներպետական վարույթում գտնվող ցանկացած գործի ընթացքի և դրանց կարգավիճակին վերաբերող ցանկացած այլ զարգացման մասին, որը կարող է առնչվել 39-րդ կանոնի ընթացակարգին: Դա չկատարելու դեպքում գործը կարող է հանվել Դատարանի գործերի ցանկից:

## 9.7. Հետագա ընթացակարգային որոշումներ

Միջանկյալ միջոցների մասին միջնորդությունների վերաբերյալ որոշումներ կայացնելիս Դատարանը կարող է նաև ընդունել լրացուցիչ ընթացակարգային որոշումներ:

- Դատարանը կարող է որոշել գործը անմիջապես հաղորդակցել պատասխանող Կառավարությանը, եթե կիրառվում է 39-րդ կանոնը կամ դիմումը հայտարարել անընդունելի, եթե 39-րդ կանոնը չի կիրառվում, այսպիսով ակնկալելով այնպիսի որոշումներ, որոնք սովորաբար ընդունվում են հետագա փուլում, երբ ՄԻԵԿ 34-րդ հոդվածի ներքո անհատական դիմում է ներկայացվում:
- Դատարանը կարող է նաև որոշում կայացնել՝ Նախարարների կոմիտեին ծանուցել միջանկյալ միջոցի մասին, Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնի 3-րդ մասի համաձայն այն դեպքերում, երբ միջանկյալ միջոց կիրառած դատական մարմինը

համարում է, որ այդպիսի ծանուցումն արդարացված է: Այսպիսի հանգամանքներում կողմերը տեղեկացվում են ծանուցման մասին:

- Այն գործերում, որոնք վերաբերում են միջազգային պաշտպանություն հայցած դիմողներին, Դատարանը երբեմն առաջնահերթություն է տալիս Դատարանի կանոնակարգի 41-րդ կանոնին վերաբերող գործերին: Դատարանի կանոնակարգի 41-րդ կանոնով նախատեսված առաջնահերթ ընթացակարգը ենթադրում է, որ ՄԻԵԿ 34-րդ հոդվածի համաձայն անհատական դիմումը քննվում է Դատարանի կողմից՝ այլ գործերի նկատմամբ առաջնահերթության կարգով:[59] 41-րդ կանոնի կիրառումը կարող է լինել դիմողների բացահայտ պահանջը՝ անկախ 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցի կիրառումից կամ մերժումից: Գործնականում, առաջնահերթ ընթացակարգը ենթադրում է, որ Դատարանի կողմից գործի քննության ուշացումները նվազում են. այնուամենայնիվ, սա չի երաշխավորում գործի քննությունը շատ քիչ հապաղմամբ, քանի որ, միևնույն է, հարկ է հետևել լիարժեք ընթացակարգին, հետևաբար Դատարանին մի քանի ամիս է անհրաժեշտ՝ կայացնելու որոշում, որում կիրառվում է 41-րդ կանոնը:
- Միջազգային պաշտպանություն հայցող դիմողներին վերաբերող գործերում Դատարանը հաճախ կիրառում է անանունության սկզբունքը՝ ըստ Դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնի 4-րդ մասի և գաղտնիությունը՝ ըստ Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 1-ին մասի:
  Դիմողները կարող են անանունություն և գաղտնիություն պահանջել կամ դրանք կարող են կիրառվել Դատարանի նախաձեռնությամբ: Անանունությունը դիմողների ինքնության հանրային չբացահայտումն է: Գործին վերաբերող բոլոր հրապարակային փաստաթղթերում դիմողներին համապատասխանաբար ներկայացնում են այբուբենի տառերով: Գաղտնիությունը նաև նշանակում է, որ գործին վերաբերող որոշ փաստաթղթեր հանրամատչելի չեն: Ավելին, եթե կիրառվում է անանունության սկզբունքը, գաղտնիության սկզբունքը նույնպես կիրառվում է այն փաստաթղթերի նկատմամբ, որոնցում նշվում են դիմողների անունները կամ որոնք կարող են այլապես հեշտորեն հանգեցնել այդ անձանց նույնականացմանը:


EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

T : +33 (0)3 88 41 20 18
F : +33 (0)3 88 41 27 30
www.echr.coe.int

[redacted]

ECHR-LE2.2bR
[redacted]

[redacted]

**BY POST AND FAX ()**

**Application no.** [redacted]

Dear Madam,

I acknowledge receipt of your correspondence of [redacted] requesting the European Court of Human Rights under Rule 39 of the Rules of Court to prevent the applicants' removal to [redacted].

**Decision on interim measure**
The Court's decision on the request for interim measures is enclosed.

The parties' attention is drawn to the fact that failure of a Contracting State to comply with a measure indicated under Rule 39 may entail a breach of Article 34 of the Convention (see *Mamatkulov and Askarov v. Turkey* [GC], nos. 46827/99 and 46951/99, §§ 128 and 129, ECHR 2005-I; *Paladi v. Moldova* [GC], no. 39806/05, §§ 84-106, 10 March 2009; *M.K. and Others v. Poland*, nos. 40503/17 and 2 others, §§ 229-38, 23 July 2020; and *K.I. v. France*, no. 5560/19, § 115, 15 April 2021).

**Additional information**
You should inform the Court of any change in your address or email or those of the applicants. Furthermore, you must inform the Court about any major developments regarding the above case, and submit any further relevant decisions of the domestic authorities.

During the proceedings the Court may send the applicants a request for further information. Failure to reply to that request may lead the Court to conclude that the applicants are no longer interested in pursuing their application and to strike it out of its list of cases.

*Դատարանի որոշման օրինակ, որը տեղեկացնում է դիմողին միջանկյալ միջոց կիրառելու որոշման մասին: Որոշումը նաև հղում է անում գործի Առաջնահերթությանը (ՄԻԵԿ-ի 41-րդ հոդվածի ներքո) և Գաղտնիությանը (ՄԻԵԿ-ի 47-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո):*

59. Տե՛ս նաև առաջնահերթությանը վերաբերող Դատարանի քաղաքականությունը https://www.echr.coe.int/Documents/Priority_policy_ENG.pdf.

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

[redacted] SECTION

DECISION

[redacted] v. [redacted]

*(no. [redacted])*

*Request for interim measures lodged on* [redacted]

The European Court of Human Rights ([redacted], the duty judge) has, on [redacted], examined the request.

The Court decides, in the interests of the parties and the proper conduct of the proceedings before it, to indicate to the Government of [redacted], under Rule 39 of the Rules of Court, that the applicants should not be removed for the duration of the proceedings before the Court.

The Court decides to give priority to the application under Rule 41.

The Court decides, under Rule 47 § 4, not to disclose the applicants' identity to the public. In all of the Court's public documents the applicants will accordingly be referred to using the letters of the alphabet shown in the appendix.

Any documents deposited with the Registry in which their names appear or which could otherwise easily lead to their identification should not be made accessible to the public (Rule 33 § 1) and shall remain confidential. [This concerns in particular the following document[s]: ….]

[redacted]
Duty Judge

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

*Դատարանի որոշման օրինակ, որը տեղեկացնում է դիմողին միջանկյալ միջոց կիրառելու որոշման մասին: Որոշումը նաև հղում է անում գործի Առաջնահերթությանը (ՄԻԵԿ-ի 41-րդ հոդվածի ներքո) և Գաղտնիությանը (ՄԻԵԿ-ի 47-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո):*

# 10. Ի՞ՆՉ Է ԼԻՆՈՒՄ ՀԵՏՈ

## Ի՞նչ է լինում որոշման կայացումից հետո:

### 10.1. Չեն կիրառվել միջանկյալ միջոցներ

Հնարավոր չէ վերաքննիչ բողոք ներկայացնել այն որոշման դեմ, որով միջանկյալ միջոց չի կիրառվել: 39-րդ կանոնի համաձայն միջնորդության մերժումը, առնվազն օրենքի տեսանկյունից, խոչընդոտ չէ Դիմողի կողմից ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն Դատարան անհատական դիմում ներկայացնելու համար, որը Դատարանը գնահատելու է ըստ էության՝ 39-րդ կանոնի համաձայն միջնորդության մերժումից անկախ:

Դիմողները կարող են նաև միջանկյալ միջոցների մասին նոր միջնորդություն ներկայացնել, բայց միայն նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

Երբ այն անձը, ում կողմից միջանկյալ միջոցի մասին ներկայացված միջնորդությունը մերժվել է, հեռացվում է՝ տեղափոխվելով մեկ այլ Պայմանավորվող կողմի տարածք, այդ անձը, կարող է, անհրաժեշտության դեպքում նոր միջնորդություն ներկայացնել այդ պետության դեմ Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնի համաձայն կամ ներկայացնել դիմում Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն:

### 10.2 Կիրառվել են միջանկյալ միջոցներ

Ըստ Դատարանի նախադեպային որոշումների, 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցները պարտադիր են այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում դրանք շարունակում են ուժի մեջ լինել:[60] Այն պետությունը, որի նկատմամբ կիրառվել են միջոցները, հետևաբար պետք է հետևի Դատարանի որոշմանը և այդ որոշման չկատարումը անպայմանորեն կհանգեցնի ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի խախտման:

### 10.3. Համապատասխանության հետ կապված խնդիրներ

Թեև միջանկյալ միջոցները նախատեսված են միայն Դատարանի կանոնակարգով և ոչ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով, Մասնակից Պետությունները պարտավոր են կատարել դրանք: Դատարանն այս պարտավորությունը և դրա պարտադիր ուժը պարզաբանել է Մեծ պալատի երկու վճիռներում՝ Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի և Պալադին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության:[61]
Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի գործով վճռում Դատարանը պարզաբանել է, որ «Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ուժով Պայմանավորվող պետությունները պարտավորվում են ձեռնպահ մնալ որևէ գործողությունից կամ անգործությունից, որը կարող է խոչընդոտել անհատ դիմողի՝ դիմում ներկայացնելու իրավունքի իրացմանը: Պայմանավորվող պետության կողմից միջանկյալ միջոցների չկատարումը պետք է համարվի Դատարանի կողմից դիմողի գանգատն արդյունավետ քննելու և այդ անձի իրավունքների արդյունավետ իրացման խոչընդոտ և համապատասխանաբար 34-րդ հոդվածի խախտում»:[62]

Պալադին ընդդեմ Մոլդովայի գործով վճռում Դատարանը լրացուցիչ պարզաբանում է ներկայացրել այս թեմայով, նշելով, որ «34-րդ հոդվածի խախտում կլինի, եթե Պայմանավորվող պետության իշխանությունները չձեռնարկեն բոլոր քայլերը, որոնք կարող էին ողջամտորեն ձեռնարկել, որպեսզի կատարեն Դատարանի կողմից կիրառված միջանկյալ միջոցը»:[63] Նույն վճռում նաև սահմանվում են մի շարք առաջնային սկզբունքներ, մասնավորապես՝

- Այն փաստը, որ միջանկյալ միջոցի կատարումը հավաստում է Դատարանը և ոչ ներպետական իշխանության պատկան մարմինները,[64] և

60. ՄԻԵԴ, Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի, Դիմում թիվ 46827/99 և 46951/99, Մեծ պալատի վճիռ, 4 փետրվարի 2005թ., պարբ. 100
61. Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի, Դիմում թիվ 46827/99 և 46951/99, Մեծ պալատի վճիռ, 4 փետրվարի 2005թ., ՄԻԵԴ, Պալադին ընդդեմ Մոլդովայի, Դիմում թիվ 39806/05, Մեծ պալատի վճիռ, 10 մարտի 2009.
62. ՄԻԵԴ, Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի, մեջբերում, պարբ. 128
63. ՄԻԵԴ, Պալադին ընդդեմ Մոլդովայի, վերը մեջբերմամբ, պարբ. 88
64. ՄԻԵԴ, , Պալադին ընդդեմ Մոլդովայի, վերը մեջբերմամբ, պարբ. 90

- Այն փաստը, որ միջանկյալ միջոցների կատարումը Դատարանին ապացուցելը կամ բացառիկ դեպքերում, կատարումը խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքների մատնանշումը Պետության պատասխանատվությունն է: Վերջին դեպքում Պետությունը պետք է նաև ցույց տա, որ իշխանությունները ձեռնարկել են բոլոր ողջամիտ քայլերը՝ խոչընդոտները վերացնելու և Դատարանին իրավիճակի մասին տեղեկացված պահելու համար:[65]

Նույն վճռում Դատարանը նաև պարզաբանել է, որ Պետության կողմից միջանկյալ միջոցների կատարման հարցը որոշելու համար որդեգրված է հետևյալ իրավական մոտեցումը.

- այն փաստը, որ 39-րդ կանոնով կանխարգելվող վնասը տեղի չի ունեցել, վերաբերելի չէ տվյալ միջանկյալ միջոցների նկատմամբ Պետության համապատասխանության գնահատման համար,[66]
- Պատասխանող պետության կողմից միջանկյալ միջոցների կատարումը գնահատելու մեկնակետը բուն միջանկյալ միջոցի ձևակերպումն է,[67]
- Դատարանը քննում է, թե արդյոք խնդրո առարկա Պետությունը համապատասխանել է նշանակված միջանկյալ միջոցների տառին և ոգուն:[68]

Հետևաբար, եթե Պետությունը չի կատարում իր նկատմամբ կիրառված միջանկյալ միջոցները, դիմողները պետք է անհապաղ ֆաքսով կամ փոստով տեղեկացնեն Դատարանին և իրենց անհատական դիմումներում բարձրացնեն ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի խախտման հարցը:

Եթե պատասխանող Պայմանավորվող կողմը ենթադրաբար չի կատարել միջանկյալ միջոցը, և Դատարանը որոշում է ծանուցել պատասխանող Պայմանավորվող կողմին դիմումի կամ դիմումի մի մասի վերաբերյալ, Նախարարների կոմիտեն նույնպես կարող է ծանուցվել Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների կատարման հետ կապված ցանկացած հարցի մասին:

## 10.4. Միջանկյալ միջոցը վերացնելը

Դատարանը կարող է վերացնել 39-րդ կանոնի միջանկյալ միջոցները այն դեպքում, երբ.

- Դատարանն այդպես վարվելն անհրաժեշտ է համարում, օրինակ՝ եթե համարվում է, որ դիմողներն այլևս անմիջական և անդառնալի վնասի վտանգի տակ չեն կամ երբ վնասի վտանգն այլևս անմիջական չէ (օրինակ՝ այն դեպքերում, երբ ապաստանի տրամադրման հայցի մերժում ստացած ապաստան հայցողին առաջարկում են ապաստանի նոր հայց ներկայացնել ներպետական իշխանություններին),
- Դիմողներն են պահանջում դա (օրինակ՝ հեշտացնելու իրենց ծագման երկիր կամավոր վերադարձը),
- Պատասխանող Կառավարությունն է պահանջում դա (օրինակ, եթե Պետությունը համարում է, որ տիրապետում է այնպիսի նյութերի, որոնք կարող են համոզել Դատարանին չեղյալ համարել միջանկյալ միջոցը և համապատասխանաբար տեղեկացնում է Դատարանին) կամ
- Դիմողը նշված ժամկետում չի հայտնել Դատարանին ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն անհատական դիմում ներկայացնելու մտադրության մասին:

Դիմողները միշտ պետք է պատասխանեն բոլոր նամակներին, որ Դատարանը կարող է ուղարկել՝ միջանկյալ միջոցի վերաբերյալ միջնորդության հնարավոր վերացման վերաբերյալ մեկնաբանություններ պահանջելով:

## 10.5. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը և Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնը

Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ Դատարանը քննության չի ընդունում այն դիմումները, որոնք ըստ էության այն նույն հարցն են, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ: Սա կիրառվում է նաև 39-րդ կանոնի փուլում: Եթե դիմողները Դատարան են դիմում միջանկյալ միջոցների կիրառման միջնորդությամբ, և ակնհայտ է, որ նույն հարցը մեկ այլ միջազգային մարմնի, օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի վարույթում է, 39-րդ կանոնի կիրառման հնարավորություն չկա: Դիմողի զանգատները մերժվում են հերթապահ դատավորի կողմից որպես անընդունելի՝ համաձայն 35-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի:

65. ՄԻԵԴ, Պալադին ընդդեմ Մոլդովայի, վերը մեջբերմամբ, պարբ. 92:
66. Նույն տեղում, պարբ. 89 վերջում:
67. Նույն տեղում, պարբ. 91
68. Նույն տեղում:

# 11. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ

Նախքան Մարդու իրավունքների եվրոպական դատարան 39-րդ կանոնի համաձայն միջնորդություն ուղարկելը, խնդրում ենք համոզվել, որ դիմողը կանգնած է իրավունքին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգի առաջ, որը, ըստ Դատարանի պրակտիկայի, կարող է պաշտպանվել 39-րդ կանոնի ներքո:

Միջնորդությունները պետք է գրված լինեն Պայմանավորվող պետության պաշտոնական լեզվով և պարունակեն հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

- Դիմողի անուն(ներ)ը,
- Դիմողի ազգանուն(ներ)ը,
- Դիմողի բնակության կամ ազատազրկման վայրը,
- Ծննդյան ամսաթիվը,
- Քաղաքացիություն(ներ)ը կամ դրանց բացակայությունը.
- Մի քանի դիմորդների դեպքում, «Անուն(ներ)», «Ազգանուն(ներ)», «Բնակության հասցե», «Ծննդյան ամսաթիվ» և «Քաղաքացիություն(ներ)» յուրաքանչյուր դիմողի վերաբերյալ,
- անուն(ներ), ազգանուն(ներ), հասցե և ներկայացուցչի հետ կապը, ներկայացուցչի հետ առկայության դեպքում,
- Պետություն(ներ)ը, որոնց դեմ ներկայացվում է միջնորդությունը:

Միջնորդությանը կից պետք է ներկայացվեն նաև ստորև նշված տեղեկությունները և փաստաթղթերը:

☐ Միջանկյալ միջոցների համար միջնորդության հիմքերը.

1. Ներկա իրավիճակի մանրամասն նկարագրությունը,
2. Անդառնալի վնասի ենթադրյալ անմիջական վտանգի բնույթը,
3. Բոլոր վերաբերելի փաստաթղթերի պատճենները (թարմ բժշկական եզրակացությունները, լուսանկարներ, փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս դիմողի խոցելիությունը, դիմողի իրավիճակին վերաբերող մամուլի հոդվածները կամ ռեպորտաժները և այլն),
4. Արտաքսման/արտահանձնման դեպքերում.
   ա. Ծագման/նպատակակետ երկիրը լքելու մանրամասն պատճառները.
   բ. Ծագման երկիր/նպատակակետ երկիր վերադառնալու վախի պատճառները.
   գ. Պայմանավորվող կողմ երկիր ժամանելու ամսաթվի և հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն,
   դ. Նպատակակետ երկիր,
   ե. Արտաքսման/արտահանձնման ակնկալվող ամսաթիվը,
   զ. Բոլոր վերաբերելի փաստաթղթերի պատճենները (խուզարկության կարգադրագիր, ձերբակալության որոշում, դատվածություններ, դիմողի մասին մամուլի հոդվածներ կամ ռեպորտաժներ, երկրի զեկույցներ և այլն):

☐ Տեղեկություններ Պայմանավորվող կողմում հանդիսացող երկրում ներպետական վարույթների վերաբերյալ.

1. Տեղեկություններ ներպետական դատավարությունների վերաբերյալ, ներառյալ դատական որոշումների և վերաքննիչ բողոքների ամսաթիվը և բովանդակությունը,
2. . ներպետական ատյաններում վարույթին վերաբերող բոլոր այլ համապատասխան տեղեկությունները,
3. Բոլոր վերաբերելի փաստաթղթերի պատճենները (ներպետական մարմինների որոշումների, դատական որոշումների, ազգային իշխանություններին և դատարաններին ներկայացված միջնորդությունների և այլնի պատճենները),
4. Արտաքսման/արտահանձնման դեպքում.

ա. Տեղեկություններ ապաստանի տրամադրման գործընթացի մասին, եթե այդպիսիք կան,

բ. Տեղեկություններ արտաքսման մասին,

գ. Բոլոր վերաբերելի փաստաթղթերի պատճենները:

- [ ] Կոնվենցիայի վկայակոչված հոդվածները:

- [ ] Պատշաճ կերպով լրացված լիազորագրի ձևը, եթե միջնորդությունը կազմված է ներկայացուցչի կողմից: Ձևը կարող է ուղարկվել միջնորդությունը ներկայացնելուց անմիջապես հետո: Միջանկյալ միջոցների մասին միջնորդության համար պահանջվում է դիմողների համաձայնությունը:

- [ ] Դատարանի կողմից տրված համարը, եթե այդ միջնորդության համարն արդեն ունեք:

- [ ] Բոլոր այլ տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ եք համարում:

Վերոհիշյալ տեղեկությունները և փաստաթղթերը չներկայացնելը կարող է հանգեցնել այն եզրահանգմանը, որ միջանկյալ միջոցների կիրառման վերաբերյալ միջնորդությունը հիմնավորված չէ կամ թերի է:
Այլ փաստաթղթերում շարադրված փաստարկներին կամ ներպետական դատավարություններին հղումը միայն բավարար չէ: Վերը նշված տեղեկությունները և փաստաթղթերը պետք է կցվեն ցանկացած միջնորդության:
Պարտադիր չէ, որ Դատարանը կապ հաստատի միջանկյալ միջոցների վերաբերյալ թերի միջնորդություն ներկայացրած դիմողների հետ:
Միջնորդությունները պետք է ներկայացվեն ՄԻԵԴ-ի 39-րդ կանոնի կայքի միջոցով կամ ֆաքսով կամ փոստով: Դատարանը չի քննի էլեկտրոնային փոստով ուղարկված միջնորդությունները:
Եթե միջնորդությունը ներկայացվում է ֆաքսով կամ փոստով, խնդրում ենք համոզվել, որ միջնորդության վերևում գրված է «RULE 39 — URGENT» («ԿԱՆՈՆ 39 — ՇՏԱՊ»):

**Դատարանի կոնտակտային տվյալները.**

Ֆաքսի համարը՝ (+33)(0)388413900
Հեռախոսահամարը՝ (+33) (0)3 88 41 20 18
Հասցեն՝ The Registrar, European Court of Human Rights Council of Europe
67075,Strasbourg,Cedex,France

## **12.** ՄԻԵԴ-ի 39-րդ կանոնին վերաբերող առանցքային փաստաթղթերը

- Դատարանի մամլո ստորաբաժանում «Միջանկյալ միջոցների փաստաթերթիկ – թարմացվել է 2024թ. մարտին»
- Դատարանի՝ «Միջանկյալ միջոցների մասին ընդհանուր տեղեկություն»
- Փաստաթուղթ «Դատարանի Նախագահի կողմից Դատարանի կանոնակարգի 32-րդ կանոնի համաձայն 2003թ. մարտի 5-ի գործնական ուղեցույցը՝ վերանայված 16 հոկտեմբերի, 2009թ., 7 հուլիսի 2011թ., 3 մայիսի 2022թ. և 28 մարտի 2024թ.»
- Փաստաթուղթ «Միջանկյալ միջոցները ըստ պետությունների և առանցքային թեմաների 2024»
- Փաստաթուղթ «39-րդ կանոնի համաձայն միջնորդությունները՝ ըստ պատասխանող պետության, Դատարանի կողմից կիրառված կամ մերժված միջոցի, 2021թ., 2022թ. և 2023թ.»

Խնդրում ենք նկատի ունենալ, որ Դատարանը մշտապես թարմացնում է այս բոլոր փաստաթղթերը: Դրանք կցված են սույն գործիքակազմին՝ 2024 թվականի դեկտեմբերին հասանելի տարբերակով: Յուրաքանչյուր փաստաթղթի ամենաթարմ տարբերակը ստանալու համար խնդրում ենք այցելել Դատարանի կայքը (էջ «Դիմողներ»):



**Նոյեմբեր, 2021թ.** ՄԱԿ ՓԳՀ–ն, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) և Բելառուսի Կարմիր Խաչը անհետաձգելի օգնություն են ցուցաբերում Բելառուսի և Լեհաստանի սահմանին արգելափակված մարդկանց: Սա ներառում է վերմակներ, տաք հագուստ, ձեռնոցներ, գլխարկներ և երկարաճիտ կոշիկներ: © ՄԱԿ ՓՀԳ/Կացիարինա Գոլուբևա



UNHCR
The UN Refugee Agency